Է· ՏԱՐԻ 2013 ԹՈՒԱԿԱՆ ՀԱՅՈՑ 23 ՀՈՌԻ 4383—Հ· Տ· 2 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1890—Ն· Տ· 14 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1890—ՀԻՋՐ· 29 ՍԷՖԷՐ 1308 ԵՐԵՔՇԱԲԹԻ

20 ՓԱՐԱ

ՆԱՄԱԿ ԿԱՄ ԱՅԼ ԻՆՉ ԳՐՈՒԹԻՒՆ ՊԷՏՔ Է ՈՒՂՂԵԼ
ԱՌ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՐԵՒԵԼՔ ՕՐԱԳՐԻ
Ղալաթիա, Նորատունկեան-խան

درعليه‌ده غلطه‌ده نورادونكيان خانده آره‌وك
غزته‌سى اداره‌سنه

Direction du journal AREVELK
Noradounghian Han, Galata
CONSTANTINOPLE

ԱՐԵՒԵԼՔ
ՕՐԱԳԻՐ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

20 ՓԱՐԱ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Պոլսոյ համար Տարեկան 160
» [illegible] 80
» [illegible] 40
[illegible] 20
» » [illegible] 100
Օտար երկիրներու տարեկան Ֆրանք 50
» » [illegible] » 25
[illegible]
[illegible]

Les annonces sont reçues
AUX BUREAUX DU JOURNAL

Կ· ՊՈԼԻՍ, 2 ՀՈԿՏԵՄԲԵՐ, 1890

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Պ· ՔՐԻՍՓԻԻ ՃԱՌԸ

Պ· Քրիսփի, իւր վերջին բանախօսութեամբ որ ի Ֆիորենցա, իրեն կէտ նպատակի դրաւ զօրացնել Երրեակ Նիզակակցութիւնն, հարուածելով Իտալիոյ հակաւստրեան կամ Իռէտէնթեան կուսակցութիւնն, որ Աւստրիոյ իշխանութեան ներքեւ մնացեալ իտալախօս գաւառաց իտալեան թագաւորութեան հետ միացումը կը պահանջէ։ Այս կուսակցութիւն ի սկզբանէ անտի Երրեակ Նիզակակցութեան դէմ գլխաւոր հակառակորդ տարրն եղած էր Իտալիոյ մէջ, և Պ· Քրիսփի բացարձակ հարուածելով այն կուսակցութիւն, իւր կողմէ նոր երաշխաւորութիւն մը կ'ընծայէ Երրեակ Նիզակակցութեան անվթար շարունակման։

Պ· Քրիսփի սա գաղափարին վրայ պնդեց որ «եթէ Իտալիա Իռէտէնթեան կուսակցութեան յարի, բովանդակ Եւրոպան իրեն դէմ կը յարուցանէ։ Օրինակի համար, Իտալիա չի կրնար պահանջել զՄալթա, որ գոհ է անգլ· դրօշին ներքեւ։ Չի կրնար նաեւ հարկադրել զՀելուետիա որ իւր իտալեան գաւառներն Իտալիոյ, գերմանական գաւառները Գերմանիոյ եւ ֆրանսական գաւառները Ֆրանսայի թողու։ Աւստրիոյ և Գերմանիոյ Նիզակակցութիւնը կը ցուցնէ թէ ազգութեանց իրաւունքը պէտք է չափաւորապէս նկատել։ Վիլհէլմ կայսր այս հայեացքը պարզեց իւր Հէլիկոլանտ այցելութեան առթիւ, և նոյն հայեացքն հաստատեց իւր այցելութեամբ առ Ցարն ի Նարվա, (որ Ռուսիոյ պալթիկեան գերմանացեղ գաւառաց մէջ է, ուր Ցարին այցելով, Գերմանիոյ կայսրը գերմանաբնակ գաւառներու վրայ ռուսական տիրապետութիւնը պաշտօնապէս ճանչեց)։ Իռէտէնթեան շարժումը զԻտալիա պատերազմի կրնայ մղել։ Եւրոպա կարելի է որ Իռէտէնթեանց քմահաճոյքին չթողու որոշել պատերազմի ժամն, և իւր ինքնապաշտպանութեան համար նախայարձակ լինի Իտալիոյ վրայ։ Մինչ Իռէտէնթեանք կը հարուածեն զԱւստրիա, չեն տեսներ թէ Ֆրանսա ո՛րպիսի ճարտարութեամբ կ'աշխատի սիրաշահել զԱւստրիա։ Իռէտէնթեանք չեն տեսներ նաև թէ իրենց հնարքներն ոյժ կուտան Պապին աշխարհական իշխանութիւնը վերահաստատել փափաքողներուն։»

Պ· Քրիսփի սա գաղափարն եւս պաշտպանեց թէ աւագ նկատումներու առջեւ գլուխ ծռել, զգացմանց զոհողութիւններ ընել, կամ գէթ լուռ կենալ հայրենասիրական պարտաւորութիւն մ'է, այսինքն թէ՝ ինչ որ եղած լինին անցեալ յարաբերութիւնք Աւստրիոյ և Իտալիոյ միջեւ՝ արդի հանգամանաց մէջ ամեն իտալացի հայրենասիրի պարտքն է Աւստրիոյ դէմ շարժելէն զգուշանալ, և ընդհակառակն, սիրով ընդգրկել Երրեակ Նիզակակցութիւնն։— «Ամէն անոնք որ կը սիրեն իրենց հայրենիքը՝ պէտք է համարձակ մաքառին Իռէտէնթեանութեան դէմ։ Միջազգային պարտաւորութիւն մ'է որ ո՛չ միայն կառավարութիւնք այլ և ժողովուրդք պէտք է խղճի մտօք յարգեն դաշնագիրը։ Կարելի չէ դաշնագիրն եղծանել՝ անպատասխանատու անձանց քմահաճոյքին յարմարելով։ Նախարարք իրենց պաշտօնին պահանջումները գիտեն։ Կարելի չէ երկրին վարչութիւնը վստահիլ կուսակցական գործիչներու յարափոփոխ կամքին։ Իտալիոյ մեծագոյն շահերը նոյն են Սավուայի Տան վեհագոյն միապետութեան շահերուն հետ։ Բաժնուիլ այն միապետութենէն կամ խզել մեր արդի նիզակակցութիւններն՝ երկրին բովանդակ կազմակերպութիւնն իսկ վտանգի մատնել է։ Ժամն հնչած է համարձակ խօսելու և մեր սիրեցեալ հայրենիքը պաշտպանելու Իռէտէնթեանց յառաջադրած քաղաքականութեան վտանգներուն դէմ։»

Դիւրին է այժմ հասկնալ թէ Վիեննայի և Փէշթայի լրագիրք ինչո՛ւ համար այնքան գովեստներ շռայլած են Իտալիոյ նախարարապետին վերջին բանախօսութեան առթիւ։

ԴԻՊՔԵՐՆ Ի ՍՈՒՏԱՆ

Եգիպտական կառավարութիւնն իմանալով թէ Սուաքինի վաճառականք ոմանք 40,000 պարկ արմտիք բերած են Սուաքին՝ քաղաքէն դուրս բնակեալ ցեղերուն վաճառելու համար, արգիլեց այս վաճառումն, առարկելով թէ այնչափ ուտեստով մը կարելի է 10,000 սուտանցիներ ապրեցնել 100 օր, որով և կը դիւրանայ Օսման Տիկմայի առաջնորդութեամբ սուտանեան նոր արշաւանք մը դէպ ի Վերին Եգիպտոս։

ԱՆԳԼԻԱ ԵՒ ԻՏԱԼԻԱ Յ'ԱՓՐԻԿԷ

Անգլիացի և իտալացի պատուիրակք նոր գումարում մ'ըրին հոկտ· 7ին ի Նափոլի, և յետոյ անգլիացի պատուիրակներ առանձին խորհրդակցեցան Հռոմի անգլ· դեսպան Լորտ Տըֆրինի հետ։ Կը վախցուի թէ Իտալիոյ և Անգլիոյ միջեւ համաձայնութիւն չպիտի կրնայ գոյանալ, որովհետեւ իտալեան պատուիրակները կը յայտարարեն թէ Քասալա քաղաքն՝ ուստից ի վաղուց քշուած էին Եգիպտացիք՝ արդի անկերպարան վիճակին մէջ չի կրնար թողուիլ։ Անգլիա Իտալիոյ թող չի տար գրաւել, օր մը վերստին եգիպտական իշխանութիւն վերահաստատելու համար հոն։ Որովհետեւ ափրիկեան խնդրոց մէջ Անգլիա և Իտալիա համաձայն կ'ընթանային, այս վէճ մասնաւորապէս ուշադրութիւն կը գրաւէ։

Պ· ՃԷՅՄՍ ՊՐԱՅՍ Յ'ԱՄԵՐԻԿԱ

Փրոֆ· Ճէյմս Պրայս, ծանօթ արեւելագէտ անդամն Անգլիոյ Երեսփ· Ժողովոյն, որ ժամանակէ մ'ի վեր յԱմերիկա կը գտնուի, Մաք Քինլիի օրէնքին վրայ իւր կարծիքն յայտնելով, զոր կը հրատարակեն ամերիկեան լրագիրք, ըսաւ թէ Ամերիկացիք բուն իսկ իրենց շահերուն կը վնասեն մաքսերն այս աստիճան բարձրացնելով և օտար ապրանաց մուտքն այնքան դժուարացնելով։ Օտար ապրանաց յԱմերիկա մուտքն անկարելութեան դատապարտելով, Ամերիկացիք անգլիացի գործարանատարց դէմ մրցումէ կը հրաժարին, մինչ այսպիսի մրցում մ'իսկ ամերիկեան տնտեսական յառաջդիմութեան գլխաւոր միջոցներէն մին եղած էր և պիտի լինէր տակաւին։ Պ· Ճէյմս Պրայսի կարծիքն է թէ այս մաքսային նոր օրէնք հաստատուած է միայն քաղաքական-կուսակցական տեսութեամբ, ամերիկացի մեծ գործարանատարց ազդեցութիւնն և քուէներն հանրապետական կուսակցութեան կողմը շահելու դիտմամբ, և թէ ամերիկեան գործաւոր դասք առանց այս նոր օրէնքին աւելի բարեկեցիկ կրնային ապրիլ։

Պ· Ճէյմս Պրայս այս օրերս Քանատա անցաւ։ Եւ ասիական լեռներն ելնելէն ետքն (իւր «ՎԵՐԵԼՔ ՅԱՐԱՐԱՏ» հանրածանօթ է նաեւ իւր հայերէն թարգմանութեամբ,) ամերիկեան քանի մը բարձր սարեր մագլցելու կը պատրաստուի եղեր։

ԲԺՇԿՈՒՀԻՔ Ի ՌՈՒՍԻԱ

Կին բժշկաց խնդիրն ի Ռուսիա, ընդ երկար վիճաբանութեան առարկայ լինելէ և իրարմէ բոլորովին տարբեր տնօրէնութեանց ենթարկուելէ ետքը, վերջապէս բանաւոր լուծում մը գտաւ։

Փեթերսպուրկի պաշտօնական Օրաթերթն հոկտ· 7ին հրատարակեց Ուքազ մը, որուն համաձայն կին բժիշկներ յետ այսօրիկ կարող են ռուսական Տէրութեան ամեն կողմ համարձակ պաշտօնավարել, և իրենց արուեստը ցոյց տուող մասնաւոր չքանշան մը պիտի կրեն իրենց կուրծքին վրայ։ Յատուկ իրաւունք տրուած է բժշկուհեաց՝ իրենց արուեստն ի գործ դնելու իգական կրթական և բարեգործական հաստատութեանց մէջ, — գիմնազիոններու կամ միջնակարգ վարժարաններու մէջ, նախակրթարաններու մէջ, հիւանդանոցներու և աղքատանոցներու, ի մի բան՝ աղջկանց և կանանց յատուկ ամեն հաստատութիւններու մէջ։ Կին բժիշկներն առանձնաշնորհեալ են նաեւ պաշտօնավարելու Զեմսթվօներու կամ գաւառային վարչութիւններու պատկանեալ հիւանդանոցներու, դարմանատուներու և շարժուն հիւանդանոցներու մէջ։ Կին բժիշկները նաեւ զերծ են այր բժշկաց վրայ օրինօք դրուած պարտաւորութիւնէն, որով սոքա ներկայ կը գտնուին երբ եղեռնական դատերու մէջ իբրեւ մասնագէտ կանչուին իշխանութեան կողմէ։

Կ'ըսուի թէ Ռուսիոյ կայսրուհւոյն մեծ ազդեցութիւնն հզօրապէս սատարած է կին բժշկաց խնդրոյն այս նպաստաւոր և բանաւոր լուծման։ Շատ մը աղքատիկ ռուս օրիորդաց համար բժշկութիւնն ապրուստի պատուաւոր միջոց մը և ընկերային նախանձելի դիրք մը կ'ընծայէ արդէն, և աւելի կրնայ ընծայել յապագային այն լայնածաւալ Տէրութեան մէջ, ուր ո՛չ միայն բժշկուհեաց այլ նոյն իսկ բժշկաց այնքան պէտք կայ դեռ։

ՖՐԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

Ի պատիւ Կարիպալտիի արձան մը պիտի կառուցուի իւր ծննդավայրին մէջ, ի Նիս, որ թէեւ երբեմն իտալական, բայց այժմ ֆրանսական քաղաք մ'է։ Այս նպատակաւ հանգանակութիւն բացուած էր տասն տարի յառաջ, բայց արձանն յօրինելու պաշտօնն ստանձնող քանդակագործին մահուամբ և ուրիշ պատճառներով, ձեռնարկը ցարդ վայր ի գլուխ չէր ելած։ Փարիզցի քանդակագործ Պ· Տըլոյ արձանի վերջնական յատակագիծ մը յօրինած է, զոր դաճով շինած ի ցոյց դրաւ անցեալ շաբթուն ի Փարիզ, և խմբագիրք և քաղաքային խորհրդականք տեսան։ Արձանը պիտի կառուցուի Նիսի այն հրապարակին մէջտեղ որ Կարիպալտիի անունը կը կրէ արդէն։ Դէմքը, Կարիպալտեան սովորական համազգեստով, կենդանի արտայայտութիւն մ'է զօրութեան և կորովի։ Պատուանդանին վրայ Ֆրանսա և Իտալիա կանգնած կը դիտեն Կարիպալտիի մանկութիւնն։ Ուրիշ խորաքանդակ մը կը ներկայացնէ երկրին ազգերն ի Նիս համախմբեալ։ Արձանին բացումը պիտի կատարի յառաջիկայ տարւոյ յունիս 2ին, Կարիպալտիի մահուան տարեդարձին առթիւ։

—Պատուոյ Լէգէոնի պատուանշանը պիտի տրուի Հ· Տորժէռ եկեղեցականին, որ Տահոմէի թագաւորին հետ յաջողապէս բանակցեցաւ և կնքեց Ֆրանսայի և Տահոմէի հաշտութեան դաշնագիրը։

—Ֆրանսացի երկրախոյզ Պ· Թրիվէ հարիւրապետն, որ Պ· Սթէնլիի պէս Ափրիկէի արեւմտեան ծայրէն արեւելեան ծայրն անցած է, կը ծանուցանէ թէ նոյմ· 10ին Պորտոյէ պիտի մեկնի՝ առեւտրական նպատակաւ երկրախուզութիւն կատարելու համար Ափրիկէի արեւմտեան և արեւելեան եզերաց երկայնութեամբ։ Երեք առեւտրական սննեակներ, գլխաւորապէս Պորտոյին, և Փարիզի քաղաքային խորհուրդը պիտի հայթայթեն այս երկրախուզութեան ծախքերն, որ ո՛չ միայն աշխարհագրական այլ և յատկապէս առեւտրական նպատակներ պիտի ունենայ։ Հարիւրապետ Թրիվէ Ափրիկէ կ'երթայ քննել իմանալու թէ ի՛նչ կը գնուի և կը ծախուի հոն, թէ վաճառք ո՛ր նաւահանգիստներէն մինչեւ ո՛ւր կ'երթան ի՛նչ ծախիւք, ի՛նչ մաքսով, թէ բնիկ ցեղերն ի՛նչ տեսակ ապրանքէ աւելի կ'ախորժին, ևն։

ԱԶՆՈՒԱԿԱՆ ՏԻԿՆԱՑՔ ԼՈՆՏՈՆԻ

Ազնուական Տիկին Լէտի Պրուք ի Լոնտոն Նիւ Պոնտ Սթրիթ փողոցին մէջ խանութ մը բացած է, ուր կը ծախէ յոյժ գեղեցիկ ասեղնագործութիւններ և ընտիր ձեռնակեղչիններ, զորս ինք գործել կուտայ խումբ մը փոքրիկ աղջկանց, որոց համար արհեստանոց մը հիմնած է յԻուսթըն։ Այս աղջիկներ, որք փողոցը մնալով գուցէ անառակութեան մատնուէին, արհեստանոցին մէջ շնորհքով բնակարան, սնունդ և ամեն խնամք կը վայելեն, և բաց աստի շաբաթն հինգ շիլին թոշակ կ'առնուն։ Լէտի Պրուք այս միջոցը գտած է բարեգործութիւնը վաճառականութեան հետ միացնելու, և առանց իւր քսակէն մեծ զոհողութիւն մ'ընելու, շատ մը անմեղ աղջիկներ թշուառութեան և մոլութեան ճիրաններէն փրկելու։

Ուրիշ ազնուական տիկին մը, Լէտի Ուիմպորն, երկար ժամանակէ հետէ լուացարան մը հիմնած է իւր ամուսնոյն ագարակին մէջ մերձ ի Պըրնմաութ, ուր կը գործածէ անոք անպաշտպան խեղճ կիներ որք մոլի կեանք մը վարել չեն ուզեր։ Այս տիկին այժմ կ'աշխատի նմանօրինակ լուացարաններ հիմնել Լոնտոնի մէջ իսկ, պարկեշտ աշխատութիւն մը հայթայթելով շատ մը նախկին դերձակուհիներու որք գործի և ապրուստի անբաւականութեան պատճառաւ փորձութեանց մատնեալ կը գտնուին։ Շատ մը որբ և անոք աղջիկներ ալ սիրով կը ներկայանան Տիկին Ուիմպորնի, պատիւ համարելով այնպիսի մեծ անուան մը ներքեւ պատսպարուիլ և պարկեշտ աշխատութեամբ ապրուստ մը ճարել։ Թէեւ Լոնտոնի մէջ լուացարանք չեն պակսիր, բայց միշտ պէտք կոյ՝ կ'ըսուի՝ մաքուր լուացարաններու ուր պարոնայց և տիկնայց ճերմակեղէնք աղէկ լուացուին ճերմկնան և ողորկուին։

Ի ՊԵԼՃԻԱ

Պելճիոյ ածխահանքերն անցեալ տարի 19,869,980 տակառաչափ հանքածուխ հանեցին, որոյ արժէքն էր 187,718,000 ֆրանք։ 1889ին, բաղդատմամբ 1888ին, 651,499 տակառաչափ ածուխ աւելի արտադրեցաւ։ Առ տակառաչափ միջին գինն էր 9·45 ֆր·, կամ 1·02 ֆրանք աւելի քան 1888ին։ Այս հանքին կ'աշխատէին 103,382 անձինք, ընդ որս 11,000 կին և աղջիկ բանուորք։ Բանուորներուն միջին օրականն էր, տարին 295 օր աշխատելով, 2·36 ֆր· հանքերէն դուրս աշխատողներուն համար, և 3·42 ֆր· հանքերուն մէջ աշխատողներուն համար։ Արտադրութեան ծախքն էր տակառաչափին 8·34 ֆրանք։ Անցեալ տարւոյ ընթացքին մէջ այս պելճիական հանքերու մէջ արկածք 147 անձանց մահուան պատճառ եղան և 101 անձինք վիրաւորեցան։

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԳՈՐԾԵՐ

Վիճակահանութիւնները բացարձակ արգիլող ամերիկեան օրէնքին համաձայն, ամերիկեան թղթատարութիւնն ո՛չ միայն չի փոխադրեր վիճակահանութեան ծանուցումներ և յայտագրեր, այլ և այնպիսի լրագիրք որք վիճակահանութեան ծանուցում կը պարունակեն՝ բացարձակ կը մերժուին ամերիկեան թղթատարական պաշտօնատանց մէջ։

—Անգլիական ճարտարագործութեան գլխաւոր կեդրոններէն մին, Շէֆիլտ, իւր դանակեղէնով հանրածանօթ, ծանրապէս կը վնասուի Մաք Քինլիի մաքսային օրէնքէն։ Տարին 360,000 անգլ· ոսկւոյ արժէքով խոշոր և մանր դանակներ և գմելիներ Շէֆիլտէ կը ղրկուէին ի Միացեալ Նահանգս, և նոր մաքսային օրէնքին գործադրութեամբ, Շէֆիլտի գործարանատէրք կը հարկադրին բոլորովին դադրեցնել իրենց յարաբերութիւնները Ամերիկայի հետ. զի այնքան մաքս կը դատապարտին վճարել, որ՝ ուրիշ ծախքերու հետ ալ միանալով՝ իրենց շահ չի մնար։ Ուրիշ բան է, կ'ըսեն, եթէ նոր մաքսերուն համեմատ դանակեղէնի գիներն եւս բարձրանան Ամերիկայի մէջ։ Բայց շնորհիւ նոր մաքսերուն ընծայած պաշտպանութեան, շատ հաւանական է որ ամերիկեան դանակագործք մրցին անգլիականաց դէմ, և գիներն առանց այնքան բարձրացնելու, իրենց ապրանքը քշելու հետամուտ լինին։

—Բայց ուրիշ ապրանաց համար, գիներն Ամերիկայի մէջ կը բարձրանան, որով օտար ապրանքներ, ծանր մաքս վճարելով հանդերձ, կարող կը լինին իրենց պէս սուղ ծախուող ամերիկեան ապրանաց դէմ մրցումը շարունակել։ Օրինակի համար, հոկտ· 8ին ի Նիւ Եորք գումարեցան Ամերիկայի կօշկակարութեան 130 մեծ գործարանաց ներկայացուցիչք, և որոշեցին կօշիկներուն գիները բարձրացնել 25-50 առ 100 առ մէն մի զոյգ։

ՖՐԱՆՍԱԿԱՆ ԹԱՏՐՈՆՔ

Ի Փարիզ Փորթ Սէն-Մարթէն թատրոնին մէջ այս պահուս տեղի կ'ունենան կրկնութիւնք Կլէօփաթրա անուն նոր թատերախաղուն Պ· Վիքթորիէն Սարտուի, որ գրած է Թէօտօր և Լա Թոսքա։ Գլխաւոր դերակատարը պիտի լինի Սառա Պէռնհարտ, որոյ լաւագոյն ձիրքերն ի յայտ ածելու կերպիւ մեծանուն թատերգակն յօրինած է իւր այս նոր խաղն ալ։ Եգիպտոսի այն հրապուրիչ, հզօր և ճարպիկ թագուհւոյն նման, Սառա Պէռնհարտ եւս ծայրագոյն ճոխութեամբ հագուած զարդարուած կուգայ ի հանդէս, կարմիր ներկած մազերով և թուխ դէմքով, ըստ ամենայն մասանց ճշգրտագոյն գաղափարը տալով հնութեան այն անուանի կնոջ։ Ինչ որ ալ լինի խաղուն յաջողութեան աստիճանն, ընդհանուր կարծիքն է թէ Կլէօփաթրայի ներկայացումն առաջիկայ ձմրան եղանակին թատերական կարեւորագոյն դէպքը պիտի լինի ի Փարիզ։

ՄԱՔՍԱՅԻՆ ԽՆԴԻՐՆ Ի ՖՐԱՆՍԱ

Ֆրանսայի նախարարական խորհուրդն իւր հոկտ· 7 ի նստին մէջ խորհեցաւ թէ երբ առեւտրական դաշնագրաց պայմանաժամն աւարտի, հաստատելի մաքսային ընդհանուր սակագինը բարձրագո՞յն մաքսերը պէտք է պարունակէ թէ նուազագոյն մաքսերն։ Երկու կերպ կարելի է յօրինել ընդհանուր մաքսային սակագին մը — կարելի է սակագնոյն մէջ բարձրագոյն աստիճանի մաքսերը նշանակել, մաք-

---

— 51 —

ԹԵՐԹՕՆ ԱՐԵՒԵԼՔԻ

ԷՄԻԼ ՌԻՇՊՈՒՐ

ԽԵԼԱԳԱՐԸ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ԱՆԿՈՒՄԸ

Երիտասարդն հազիւ ժամանակ ունեցաւ մէկ կողմ նետուելու։ Դաշոյնը պարապը գնաց։ Կնոջ կատաղութիւնն աւելի եւս սաստկացաւ, կոկորդէն խռնչիւն մը ելաւ, եւ նորէն վեր առաւ բազուկը, դաշոյնին ծայրը դէպ ի առաջ, երկրորդ անգամ մարգիզին վրայ յարձակելու պատրաստ։

Բայց Օռօռ ժամանակ ունեցած էր ըսթափելու այն զարմացմէն զոր պատճառած էր իրեն Ֆրանչէսքայի հիւրասիրութեան ըմբռման այս տարօրինակ ձեւը։ Մէկ ոստմամբ երիտասարդին ու համր կնոջ միջեւ նետուեցաւ։

—Կեցի՛ր, Ֆրանչէսքա, կեցի՛ր, գոչեց հրամայական ձայնով մը։

Համր կինը մռնչիւնով մը պատասխանեց։

—Իմ բարեկամս է, յարեց մանկամարդ աղջիկը, կ'արգիլեմ քեզ իրեն վնաս հասցունել։

Այս անգամ, Օռօռի նայուածքին ազդեցութեան տակ, Ֆրանչէսքա յետս ընկրկեցաւ, բայց շարունակելով սպառնալ մարգիզին՝ իր սուր եւ կատաղի նայուածքով։

—Ինքզինքդ եկուր, ինչո՞ւ այդպէս երեսը կը նայիս, ըսաւ մանկամարդ աղջիկը. չե՞ս տեսներ որ չար մէկը չէ։ Ֆրանչէսքա՛, այդ դաշոյնը տեղը դիր։

Համր կինը իր տիրուհւոյն հրամանը չլսելու երեւոյթ մը ունեցաւ։ Օռօռ շարունակեց.

—Կը մոռնա՞ս, Ֆրանչէսքա, թէ հայրս արգիլեց քեզ որ կամքիս չհակառակիս. ահա՛ այս վայրկենին կը նեղացնես զիս։ Միթէ զիս լացունե՞լ կ'ուզես։

Ֆրանչէսքայի կատաղութիւնը մարեցաւ յանկարծ։ Առանց ընդդիմութեան թողուց որ Օռօռ ձեռքէն առնու դաշոյնն ու չըմինէին վրայ դնէ։ Սակայն մարգիզն աչքէն չէր հեռացներ։ Երիտասարդն՝ անշարժ, գունատ, զալկահար, նոր կ'սկսէր հասկնալ թէ իր կեանքն արդարեւ վտանգի մը մատնուած էր։ Մանկամարդ աղջիկն անոր մօտենալով.

—Ֆրանչէսքան զիս շատ կը սիրէ, ըսաւ. երկար ատեն կայ որ քովս է. ինքը մեծցուցած է զիս։ Հօրս բացակայութեան ժամանակ վրաս կը հսկէ ու քովէս չբաժնուիր բնաւ։ Ո՛ր եւ է վտանգի դէմ զիս պաշտպանելու պատրաստ է միշտ։ Եթէ մէկն ինծի չարիք մը հասցունէ կամ վիշտ պատճառէ, կ'սպաննէ զայն։

—Կը հաւատամ թէ այդպէս է, պատասխանեց Ատրիէն, վասն զի քիչ մնաց իր կատաղութեանը զոհուէի։ Կ'ըմբռնեմ թէ այստեղ իմ ներկայութիւնս իր զայրոյթը գրգռած ըլլայ. կ'երեւի թէ ինքը այնպէս կարծեց որ ես յոռի նպատակով մը եկած ըլլամ այստեղ։ Բայց կ'երդնում ձեզ, օրիորդ, . . .

—Ատրիէ՛ն, Ատրիէ՛ն, ընդմիջեց.

—Կ'երդնում ձեզ, Օռօռ, թէ շատ պիտի ցաւէի եթէ նոյն իսկ ամենափոքր նեղութիւն մը պատճառէի ձեզ։ Եթէ տեսնէի որ իմ պատճառաւս արցունք կը թափէք, այդ բանը դժբաղդութիւն մը պիտի համարէի։ Ա՛հ, սրտիս մէջ կ'զգամ որ ձեր մէկ վիշտը փարատելու համար՝ պատրաստ եմ կեանքս զոհելու։

—Բարեսիրտ էք, Ատրիէն, հօրս պէս անոյշ նայուածք մը ունիք։ Չեմ գիտեր թէ ի՛նչ կզգամ այս վայրկենիս։ Սիրտս կը բաբախէ եւ բարերար ջերմութիւն մը կը պատէ զիս։ Չեմ գիտեր թէ ի՛նչ հեշտութիւն է որ կը հրապուրէ զիս. առաջին անգամն է որ այսպիսի հաճոյք մը կ'զգամ։ Այնպէս մը կուգայ ինծի թէ ներսիդիս բան մը կ'արթննայ։

Ձեռքը ճակտին տարաւ։

—Հոս, ըսաւ, հոս՝ գլխուս մէջ խել մը շփոթ բաներ կան խառն ի խուռն. տեսակ մը քաոս, որուն մէջ տարօրինակ բան մը կը կատարուի։ Ա՛հ, երջանիկ եմ, շա՛տ երջանիկ։

Երիտասարդը նստեցաւ եւ ինքն ալ անոր քով նստաւ։

Համր կինն ալ, անոնց դէմ, թիկնաթոռի մը վրայ նստաւ։ Իր նայուածքին բոցը մարած էր. բայց ամեն վայրկեան խուլ մռնչիւն մը կ'արձակէր, պահապան շան մը պէս որ իր հսկողութեանը մէջ թերացած է։

—Այո՛, այո՛, երջանիկ եմ, յարեց Օռօռ։ Կարծես բան մը կ'օրօրէ զիս մեղմիւ։ Շուրջս ամեն բան իր երեւոյթը կը փոխէ։ Արեւն այսքա՛ն փայլուն ճառագայթներ չէր արձակած երբէք։ Երբէք պարտէզին մէջ այսպիսի լոյս մը չէի տեսած։ Պահ մը առաջ իմ ծաղիկներուս կը նայէի ու աւելի գեղեցկացած կը գտնէի զայն։ Ա՛հ, ինչպէս շունչ կ'առնեմ հիմակ։ Օդին մէջ չգիտեմ ինչպիսի զուարթութիւն մը կայ. ինծի այնպէս կուգայ թէ հեշտալուր նուագարան մը կը լսեմ. ներսէս երգ մը կ'երգուի կարծես։ Այս ամենն ի՛նչ լաւ է ու անոյշ։

Վայրկեան մը մնաց անխօս, գլուխը կուրծքին վրայ հակած։

—Սիրայօժար պիտի գոցէի աչքերս ու քնանայի, մրմնջեց։

Երիտասարդն անբացատրելի արբշռութեան մը մատնուած էր. այդ տարօրինակ աղջկան խօսքերը մինչեւ իր հոգւոյն կը հասնէին։ Ըսելիք խօսք չի գտնելով, լուռ կը մնար։

—Շատ անգամ կը ձանձրանամ, վրայ բերաւ Օռօռ, գլուխը վեր առնելով եւ իր խոշոր կապոյտ աչքերը մարգիզին վրայ ուղղելով. դուք հոս իմ քովս պիտի մնաք, այնպէս չէ՞, Ատրիէն։ Իմ բարեկամս՝ եղբայրս պիտի ըլլաք եւ հօրս պէս պիտի սիրեմ զձեզ։

—Ա՛հ, շատ կը փափագէի, պատասխանեց երիտասարդը եռանդագին, բայց այդ բանն անհնար է։

—Ինչո՞ւ համար։

Թէպէտ Ատրիէն ո՛չ բանի մը վրայ զարմանալու չէր, սակայն այս հարցումը շփոթեցուց զինքը։ Ինք չէր կրնար հասկցունել Օռօռին թէ կարգ մը պատճառներ արգելք կ'ըլլային անոր խնդրածը կատարելու։

—Բարեկամներ ունիմ, թոթովեց. եթէ տեսնեն որ քովերնին չեմ դառնար, մտահոգութեան կը մատնուին։

Օռօռի անոյշ նայուածքը մթագնեցաւ յանկարծ։

—Երբեմն, ըսաւ, իմ թռչուններս ու թիթեռնիկներս պատերուն վրայէն կը թռչին ու դաշտերը կ'երթան. բայց կը դառնան նորէն։

—Ես ալ անոնց պէս պիտի ընեմ, նորէն պիտի դառնամ։

—Ճշմարի՞տ է։

—Կը խոստանամ ձեզ։

—Ատրիէն, եթէ չի վերադառնաք, կուլամ։

—Ես զձեզ լացնե՛մ, Աստուած չընէ, գոչեց Ատրիէն։

Եւ ծաղկատի աղջկան ձեռքը բռնելով, շրթանցը տարաւ զայն և ինքնիրմէն դուրս ելած՝ հրաբորբոք համբոյր մը դրոշմեց։

Այս քիչ մը ծայրայեղ մտերմութիւնը հաճելի չերեւաց Ֆրանչէսքայի որ ելաւ կանգնեցաւ, իբր թէ զսպանակէ մը մղուած ըլլար, եւ սպառնալից մռնչիւն մը արձակեց։

—Ֆրանչէսքա, տեղդ նստած կեցիր և ալ մի՛ մռլտար, ըսաւ նմա Օռօռ։ Ի՞նչ կայ որ աչքերդ այդպէս չար կերպով բացեր ես։ Չե՞ս տեսներ թէ ես հաճոյք կը զգամ։ Երջանիկ եմ, կը հասկնա՞ս, Ֆրանչէսքա, երջանիկ եմ։

Համր կինը գլուխն օրօրեց տարակուսական կերպով եւ թիկնաթոռին վրայ ինկաւ վերստին։

Սրահին ժամացոյցը կէս օր պիտի զարնէր։ Ըսել է երեք ժամ կար որ մարգիզը Օռօռին հետ կը գտնուէր։ Այս ընկերակցութիւնը որքան ալ հաճելի ըլլար, հակառակ համր կնոջ ներկայութեան ու անոր մռնչիւններուն,—որոց, ճշմարիտն ըսելով, բնաւ ուշադրութիւն չէր դարձներ,—երիտասարդն հարկ դատեց աւելի երկար չի մնալ։ Ոտքի ելաւ, ու առաւ գլխարկը զոր սեղանին վրայ դրած էր։

—Կ'երթա՞ք, հարցուց Օռօռ։

Ատրիէն ժամացոյցը ցցուց։

—Այո՛, կէս օր է, ըսաւ աղջիկը։

—Հարկադրուած եմ մեկնիլ։

—Այդպէ՛ս շուտ։

—Խոստացայ նորէն գալ։

—Ճիշդ է։ Ե՞րբ կուգաք։

—Վաղը, եթէ կ'ուզէք։

—Ո՛հ, այո՛, այո՛, վաղը։

—Ուրեմն որոշուած է, վաղը։

—Չէ՞ք մոռնար։

—Մի՛ վախնաք։

—Երթա՛ք բարով ուրեմն, վաղը կըսպասեմ ձեզ։ Ժամը քանի՞ն պիտի գաք։

—Կէս օրին։

(Շարունակելի)

ի վեղչում շնորհելով այն ազգաց որք մաքսային շնորհ կ'ընեն Ֆրանսայի, և նշանակեալ բարձր մաքսերը պահանջելով այն ազգերէն որք այնպիսի շնորհ չեն ըներ։ Կարելի է նաեւ սակագնոյն մէջ նուազագոյն մաքսերը նշանակել, մաքսի բարձրացում հրատարակելով այն ազգաց դէմ որք նմանապէս չեն զեղչեր իրենց մաքսերն և կը մերժեն ֆրանսական ապրանքներն։ Այս երկու ընթացքէն որի՞ն պէտք էր հետեւէր Ֆրանսա յապաղային։ Նախարարք այս խնդրոյն վրայ աչա խորհրդակցեցան, և որոշեցին առաջին եղանակին հետեւիլ, նկատելով թէ նուազ անպատեհ է շնորհ մ'ընել սակաւուց, քան խստութիւն բանեցնել բազմաց դէմ. այսինքն՝ Ֆրանսա քաղաքականապէս աւելի բարեպատեհ գործ մը կ'ընէ եթէ իւր սովորական բարձր մաքսերը զեղչէ ազգաց ոմանց նկատմամբ որք մաքսային շնորհներ կ'ընեն իրեն, քան եթէ իւր որոշեալ սակագինը բարձրացնէ այն աւելի շատուոր ազգաց դէմ որք մաքսապաշտ ուղղութեան մը կը հետեւին Ֆրանսայի դէմ։ — Այս ընդհանուր սկզբունքը դնելէն ետեւ, մաքսային սակագնոյն մանրամասնութեանց քննութեամբ կը զբաղի նախարարական խորհուրդը։

ՌՈՒՍԱԿԱՆ ՆԵՂՃ ԴՐԱՄՔ

Պերլինէ կը ծանուցուի թէ հինգ և տասն րուպլինոց շատ մը կեղծ դրամք (մանէթ) կը շրջաբերին այս պահուս։ Տասն րուպլինոցք ճշմարիտ մանէթէն քիչ մը պզտիկ են, այնպէս կարելի չէ զանազանել. Իսկ հինգ րուպլինոցք շատ դէշ շինուած են։ Ռուսիոյ կայսերական դրամատունը մի քանի օրուան մէջ 500 հատ փոխանակեց անոնցմէ։

Ֆրէսինէ ընկերութեան Սէն Մար՛ շոգենաւն, որ երբեմն Կ. Պոլսոյ և Մարսիլիոյ միջեւ կը բանէր, և ժամանակէ մ'ի վեր Ալժիրի գծին կը գործածուէր, անցեալ շաբթուն Մարսիլիա գացած պահուն ստորնայարկէն բռնկեցաւ, և հակառակ ամեն ճգանց, բոլորովին այրեցաւ։ Մարդու կորուստ չեղաւ։

—Զարին հօրեղբայր մեծ-դուքս Նիքոլա ծանր հիւանդ է ի Ղրիմ, և կ'ըսուի թէ իւր հիւանդութիւն այժմ ուղեղային տկարութեան մը հանգամանքն ստացած է։

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Թիֆլիզի լրագիրք կը ծանուցանեն թէ Գեր. Խորէն Արքեպիսկոպոս Նար-Պէյ թէեւ որոշած է եղեր երկրորդ անգամ Էջմիածին երթալ, Ս. Միւռոնի օրհնութեան ներկայ գտնուելու, սակայն ի վերջոյ փոխեր է իւր դիտաւորութիւնն և կը պատրաստուի եղեր Կ. Պոլիս գալ։

Ն. Սրբազնութիւն սեպտեմբեր 23ի կիրակի օրը Վանքի Մայր եկեղեցւոյն մէջ հանդիսաւոր պատարագ մատուցանելէ յետոյ, ճանբայ պիտի ելլէր Թիֆլիզէն։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ս. ՓՐԿՉԻ ԱԶԳ. ՀԻՒԱՆԴԱՆՈՑԻ

Թանիցս ի պաշտօնէ յայտարարութիւն եղած է Հոգաբարձութեանս կողմանէ թէ՝ Ազգային Հիւանդանոցն այլ եւս նոր պատսպարելոց տեղ չունի, զի արդէն ներկայ պատսպարելոց թիւն 700ի կը յանգի։

Ցաւօք կը տեսնենք որ սոյն յայտարարութեան հակառակ շարունակ թէ՝ գաւառներէն և թէ՝ մայրաքաղաքիս պատուարժան Թաղական Խորհրդոց կողմանէ ո՛չ սակաւ անձինք կը ներկայանան ի պատսպարութիւն։

Արդ՝ Հոգաբարձութիւնս ներկայիւս կը փութայ յայտարարել որ միայն յիմարներն և հիւանդներն, ինչպէս նաեւ բոլորովին անպաշտպան որբ տղայք պիտի ընդունուին ի պատսպարութիւն, հետեւապէս պաշտօնական մարմինք սոյն կէտը ուշադրութեան առնլով, ըստ այնմ յանձնարարութիւններ ընեն։

Ի դիմաց Հոգաբ. Ազգ. Հիւանդ.
Ատենադպիր Ատենապետ
ՏԻԳ. ԿԻՒՄԻՒՇԿԵՐՏԱՆ ՄԻՔ. ՅԱԿՈԲԵԱՆ
Կ. Պոլիս
29 սեպտ. 1890

Այս կիրակի օր, վայելուչ շքով կատարուեցաւ Օրթագիւղի Հռիփսիմեանց ու Նեկտարինեան վարժարանին մրցանակաբաշխութեան հանդէսը վարժարանին ուսումնասրահին մէջ, ի ներկայութեան երկսեռ ընտրելագոյն հանդիսականաց, յորս կը նշմարուէին քանի մը եկեղեցականք, գրագէտք ոմանք եւ ուսուցիչք եւ խնամակալութեան անդամոց մեծ մասամբ։ Մրցանակաց բաշխումէն առաջ, Բ. կարգի Աշխարհ. եւ Հայերէն լեզուի քննութիւնք կատարուեցան ի լուր հանդիսականաց, որք մեծ գոհութիւն յայտնեցին աշակերտուհեաց յաջողակ պատասխաններուն համար։

Ետ այնորիկ կատարուեցաւ մրցանակաբաշխութիւնն քաղցրալուր երգոց ընդմիջմամբք։ Իւրաքանչիւր աշակերտուհի կ'ստանար գեղեցիկ նուէրներ ըստ իւր յաջողութեան աստիճանին։ Ընդհանրապէս դիտուեցաւ թէ արդի խնամակալութեան հոգածու և անձնուէր ջանիւքն և ուսուցչաց ընտիր խմբի մը աջակցութեամբ Հռիփսիմեանց վարժարանն, ըստ իւր վաղեմի համբաւոյն, իւր առաջնակարգ դիրքը պահած է միշտ ի շարս ազգային կրթական հաստատութեանց։

ՀԱՇՈՒԵՑՈՅՑ

ԴՊՐՈՑԱՍԷՐ ՏԻԿՆԱՆՑ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

1889 Մայիս 1էն մինչեւ 1890 Ապրիլ 30է

ՄՈՒՏՔ

		ղրշ.
Ըստ 1889 Ապրիլ 30ի փակեալ հաշուոց		3393·50
Ընկերուհեաց բաժնեգիններէ		467 —
Այլ և այլ հանգանակութիւններէ		8777 —
Պարահանդէսէ Լ.Օ.(340)	36720 —	
Այլ և այլ հասոյթներէ	1357·25	
Ամսաթոշակներէ	11402 —	49479·25
		62116·75

ԵԼՔ

Ուսուցչաց թոշակք	16750 —
Գործակատարաց թոշակք	3665 —
Գիշերօթիկներու ուտեստի	12461 —
» զգեստի	511 —
Ածուխ և փայտ	1089 —
Ձեռագործի ծախք	415·75
Դպրոցական ծախք	367 —
Լրագրի բաժանորդագրութիւն	420 —
Տպագրութեան	62 —
Դասագիրք, կարասիք ևն.	793·75
Այլ և այլ ծախք դպրցկն. ընկեր. (վրժր. փոխադր. ևն.)	903 —
Ընկերութեան ծախք	596·75
Տան վարձք	6696 —
Դրամատունին քով գտնուած դրմ.	16200 —
Ապառիկ մնացած	439 —
Սնտուկը պատրաստ դրամ	748 —
	62116·75

Գանձապետ
ՍՈՖԻ Կ. ՍԸՎԱՃԵԱՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՊԱՇՏՕՆԱԲԱՇԽՈՒԹԻՒՆՔ ԱՍՏԻՃԱՆՔ ԵՒ ՊԱՏՈՒԱՆՇԱՆՔ

Եէմէնի նահանգին Տէֆթէրտար անուանեցաւ Խայրի էֆէնտի, Տէֆթէրտար Ատանայի։

Ատանայի նահանգին Տէֆթէրտար անուանեցաւ ելմտական նախկին քննիչ Մուհսին էֆէնտի։

Սեբաստիոյ նահանգին Տէֆթէրտար անուանեցաւ Վասֆը էֆէնտի, Տէֆթէրտար Եէմէնի։

— —

Սանճէքի երկրորդ աստիճան տրըուեցաւ Էնկիւրիի Այաշ գաւառակին գայմագամ Մուսա Քեազիմ էֆէնտի, նահանգին ոստիկանապետ Էօմէր էֆէնտիի և նահանգին դիւանատան տնօրէնի օգնական Սալիհ էֆէնտիի։

— —

Առաջին կարգի Մէճիտիյէ պատուանշան տրուեցաւ Եգիպտացի Ահմէտ փաշայի որդի Իպրահիմ փաշայի։

Երրորդ կարգի Մէճիտիյէ Էնկիւրիի պահեստի զօրաց հազարապետ Մէհմէտ աղայի ու Քեազիմ պէյի, Պէյբազարի հազարապետ Ալի Րիզա ու Ահմէտ Րիւշտի էֆէնտիներու և Էնկիւրիի նահանգին թապուր աղասը Հաֆըզ աղայի։

Չորրորդ կարգի Օսմանիյէ՝ Էնկիւրիի Հէյմանէ գաւառակին գայմագամ Միտհատ էֆէնտիի, Պէյբազարի գայմագամ Մուսթաֆա էֆէնտիի, Սէֆէրիհիսարի գայմագամ Բէրթէվ էֆէնտիի, Նալլըհանի գայմագամ Հիւսնի էֆէնտիի, Մէտրէնի գայմագամ Խալիլ էֆէնտիի, Միխալըճըքի գայմագամ Նէճիպ էֆէնտիի, Պալայի գայմագամ Ճէմալ էֆէնտիի և նահանգին Իտարէի ժողովոյ առաջին քարտուղար Իսմայիլ էֆէնտիի։

Ի ԿԱՅՍ. ՊԱԼԱՏ

Բարձր. Մեծ-Եպարքոսն և Բարձր. Սպարապետն երէկ կայս. պալատ գնացին և Վեհ. Սուլթանի ինչ ինչ հրամաններն ստանալով, իրենց պաշտօնատեղիները դարձան։

—Ելմտական Նախարար Վսեմ. Յակոբ փաշա երէկ կայս. պալատ հրաւիրուելով, Վեհ. Սուլթանի ինչ ինչ հրամաններն ստացաւ ի մասին ելմտական գործոց։

Ի Բ. ԴՈՒՌՆ

Բարձր. Մեծ-Եպարքոսն և Արտաքին գործոց Վսեմ. Նախարարն երէկ երեկոյեան մինչեւ ուշ ժամանակ խորհրդակցութիւններ կատարեցին ինչ ինչ խնդրոց վրայ։

—Քաղաքապետ Րըզվան պէյ երէկ Բ. Դուռը գնաց և յաջորդաբար տեսակցեցաւ Բարձր. Մեծ-Եպարքոսին և Ներքին ու Արտաքին գործոց Վսեմ. Նախարարներուն հետ։

—Ռուսական, ֆրանսական, աւստրիական, պարսկական, պելճիական և հելլենական դեսպանք երէկ Բ. Դուռն երթալով յաջորդաբար տեսակցեցան Բարձր. Մեծ-Եպարքոսին ու Արտաքին գործոց Վսեմ. Նախարարին հետ։

Հելլենական դեսպան Պ. Մավրոկորտաթօ յետոյ Ոստիկանութեան Դուռը գնաց և այցելութիւն տուաւ Նախարար Նազըմ պէյի։

Դեսպանը Ն. Վսեմութեան հետ խորհրդակցեցաւ ի մասին մէկ քանի հելլենական հպատակներու, որոնց իրենց հայրենիքը ղրկուիլը հարկ դատուած է։

ՄԷՔԼԷՆՊՈՒՐԿԻ ԴՈՒՔՍԸ

Մէքլէնպուրկի Դուքսն ու Դքսուհին կիրակի օրը Թարապիա գնացին Թոնթէլէր շոգենաւով։ Նոյն Բարձրութիւնք շոգենաւին մէջ հացկերոյթ մը տուին ի պատիւ ռուսական ու գերմանական դեսպանաց և Տիկին տը Րատովիցի։

Բարձրաստիճան հիւրերը գիշերը շոգենաւին մէջ անցուցին և երէկ առաւօտ ժամ 3ին Գապաթաշի առջեւ եկան, ուրկից շոգեմակոյկով Տոլմա Պաղչէ եկան։ Հոն պալատան ամեն մասերն այցելելէ յետոյ պալատական կառքերով Բանկալթիի ռուսական եկեղեցին երթալով ներկայ գտնուեցան կրօնական արարողութեանց։ Դուքսին ու Դքսուհւոյն կ'ընկերանային իրենց հիւրամեծար կայս. թիկնապահ Ահմէտ Ալի փաշա և Մէհմէտ պէյ, Յաւարտ կրօնական արարողութեանց ժամ 7ին Դուքսն ու Դքսուհին Բերայի ռուսական դեսպանատունը գնացին, ուր դեսպան Պ. Նէլիտով շքեղ սեղան մը տուաւ։ Սեղանին ներկայ էին նաեւ գերմանական դեսպանը ու կինը, առաջին թարգման Պ. Թէսթա, կայս. աւագ թիկնապահ Շաքիր փաշա, կայս. թիկնապահ Ահմէտ Ալի փաշա և ռուսական դեսպանատան գլխաւոր պաշտօնեայք։ Բարձրաստիճան հիւրերը ժամ 9½ին մեկնեցան ռուսական դեսպանատունէն և ուղղակի գերմանական դեսպանատունն երթալով այցելութիւն տուին Պ. տը Րատովիցի։

* *

Մէքլէնպուրկի Դուքսն ու Դքսուհին թէեւ երէկ պիտի մեկնէին մայրաքաղաքէս, սակայն երկու օրուան համար յետաձգած են իրենց ուղեւորութիւնը։

ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԱՑ ԽՆԴԻՐԸ

Ըստ տեղեկութեանց Լ. Հէրալտի, շաբաթ օրը ի Բ. Դուռն գումարեալ Նախարարական արտասովոր ժողովը նկատողութեան առեր է Պատրիարքարանաց գործերը քննելու պաշտօն ունեցող Նախարարական յանձնաժողովոյ տեղեկագիրն, և խորհրդակցեր է Ֆէնէրի Պատրիարքարանին Սինոդին կողմէ ուրբաթ օրը տրուած որոշմանց վրայ։

Կ. ՊՈԼՍՈՅ ՔԱՐԱՓՈՒՆՔ

Կիրակի աւուր Նախարարաց Խորհրդոյ պահուն, ծովային սպայակոյտի պետ Ֆէրիգ Ֆայիգ փաշա և միրլիվա Մէհմէտ փաշա Բ. Դուռն հրաւիրուեցան ուր ինչ ինչ բացատրութիւններ ուզուեցան անոնցմէ, ի մասին Կ. Պոլսոյ քարափանց շինութեան ծրագրոյն։ Յետոյ, Նախարարաց Խորհուրդն այդ ծրագրոյ վերաբերեալ պաշտօնական թուղթերն յղեց Հանրօգուտ շինութեանց նախարարութեան որպէս զի Պ. Կրանէի հաղորդէ Զինուորական Քննիչ Յանձնաժողովոյ կողմէ ներմուծեալ բարեփոխումներն։

ՍԱՄԻՀ ՓԱՇԱ

Կայս. Իրատէ մը հրամայած է տասն երկու հազար հինգ հարիւր ղրուշի հանգստեան թոշակ յատկացնել Կարնոյ նախորդ կուսակալ Սամիհ փաշայի։

ՀԱՑԿԵՐՈՅԹ Ի ԿԱՅՍ. ՊԱԼԱՏ

Այս իրիկուն կայս. պալատան մէջ շքեղ հացկերոյթ մը պիտի տրուի ի պատիւ աւստրիական դեսպան Պառոն Քալիչէի և պելճիական դեսպան Պ. Պորչկրավի։

ՍԱՎԱ ՓԱՇԱ

Կրէտէի նախկին կուսակալ Սավա փաշա, որոյ մեկնումը ծանուցինք, արձակուրդով Իտալիա կ'երթայ իւր անձնական վատառողջութիւնը դարմանելու համար։ Ն. Վսեմութիւն նախ Մարսիլիա կուղեւորի ուր ակնաբոյժ Պ. Մէտաքսայի դարմանել պիտի տայ իւր աչաց հիւանդութիւնը։

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Հալէպէն եկած հեռագիրք կը ծանուցանեն թէ սեպտեմբեր 29ին նոյն իսկ Հալէպի մէջ 56 հոգի հնտախտէ բռնուելով, ասոնցմէ 13 և առաջուան բռնուածներէն 9 հոգի մեռեր են։ Սեպտեմբեր 30ին եւս 40 հոգի հընտախտէ բռնուելով, ասոնցմէ 8 և առաջուան բռնուածներէն 24 հոգի մեռեր են։

—Կ'ըսուի թէ մայրաքաղաքէս մէկ քանի բժիշկներ պիտի ղրկուին ի Հալէպ և Իսկէնտէրուն հսկելու համար այդ տեղերու հանրային մաքրութեան վրայ։

ՍԻՐՔԷՃԻԻ ՆՈՐ ԿԱՅԱՐԱՆԸ

Հանրօգուտ շինութեանց Նախարարութեան կողմէ կարգեալ Յանձնաժողով մը երէկ Արեւելեան երկաթուղեաց ընկերութեան նորակառոյց կայարանը գնաց ի Սիրքէճի՝ կատարուած աշխատութիւնները աչքէ անցունելու և շինութեան մասին տեղեկագիր մը պատրաստելու համար։ Այդ յանձնաժողովոյ անդամներն են, Աբրամ էֆ. Մարկոսեան՝ Դեր-տնօրէն երկաթուղեաց ճիւղին և կեդրոնական գօմիսէր, Բումպարի էֆ. գօմիսէր առաջին ճիւղին, և Չէրքէզեան էֆ. ճարտարագէտ կամրջաց եւ խճուղեաց։

Երբ այս յանձնաժողով իւր տեղեկագիրը պատրաստէ, ուրիշ յանձնաժողով մը պիտի ընտրուի պաշտօն ունենալով ճշդել առաջնոյն կատարած աշխատութիւնը և կայարանը բացուելու պատրաստ վիճակի մէջ հռչակել։

ՍՊԱՆԻԱԿԱՆ ԴԵՍՊԱՆԸ

Մայրաքաղաքիս սպանիական նորընտիր դեսպան Ռիւաթա մարքիզն երէկ Վեհ. Սուլթանին ներկայանալու պատիւն ունեցաւ և իւր յանձնարարագրերը մատոյց։

Դեսպանը, առաջին Թարգման Պ. Սիկալա, Արտաքին գործոց Նախարարութեան արարողապետի օգնական Ղալիպ պէյ և դեսպանատան գլխաւոր պաշտօնեայք յատկապէս ղրկուած պալատական կառքերով Բերայի դեսպանատունէն կայս. պալատ գնացին և ընդունուեցան կայս. թիկնապահաց ու պալատական պաշտօնէից կողմէ։ Պահ մը հանգիստ առնելէ յետոյ Ռիւաթա մարքիզն ու առաջին Թարգման Պ. Սիկալա Վեհ. Սուլթանին ներկայանալու պատիւն ունեցան և դեսպանը Ն. Վեհափառութեան մատոյց իւր յանձնարարագրերը։ Արտաքին գործոց Նախարար Սայիտ փաշա և արարողապետ Միւնիր փաշա ներկայ գտնուեցան սոյն ունկնդրութեան։

Ունկնդրութենէն յետոյ դեսպանն և իւր հետեւորդք Բերա վերադարձան պալատական կառքերով։

ՕՏԱՐ ՊԱՏՈՒԱՆՇԱՆ

Պարսկական կառավարութիւնն Առիւծու և Արեգական պատուանշանի առաջին աստիճանը նուիրած է Բարձր. Մեծ-Եպարքոսին Թարգման Վէֆիք էֆէնտիի։

Պ. ՎԻԺԻԷԻ ԾՐԱԳԻՐԸ

Պ. Վիժիէի երկաթուղւոյ ծանուցեալ առաջարկը մերժուած է։ Այս մերժում երէկ հաղորդուեցաւ նմա Հանրօգուտ շինութեանց Նախարարութեան կողմէ։

ԳԱՒԱՌԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Ըստ տեղեկութեանց Սաադէթի, Կարնոյ Իտարէի ժողովն դատաստանի ենթարկած է Բզիի գայմագամ Ալի Րիզա էֆէնտին, նախկ. Մէհմէտ Միւքէրրէմ էֆէնտին, ելմտական նախորդ պաշտօնեայ Ալի Աֆիֆ էֆէնտին, թղթակցութեանց քարտուղար Մէհմէտ Սայիտ էֆէնտին, տասանորդի տրոց պաշտօնեայ Թէվֆիգ պէյն և Բզիի Իտարէի ժողովոյ անդամներէն Մարտիկ ու Գէորգ աղաները։ Ասոնք Բզիի շրջակայ մէկ քանի գիւղերու 1305 տարւոյ տասանորդի տուրքերը, յատուկ հրահանգին տրամադրութեանց հակառակ, միացնելով մէկ վարձակալի մը յանձնած էին։ Վերոյգրեալ անձինք դատապարտուած են մէկ ու կէս տարի պաշտօնէ զրկուելու և դրամական տուգանաց։

—Ըստ տեղեկութեանց [illegible], Զիեա փաշայի նախագահութեամբ կազմեալ քննիչ մասնախումբն, որ պաշտօն ունի ասիական մէկ քանի գաւառաց մէջ քննութիւններ կատարել, Բաղէշ ժամանելով քննութեանց ձեռնարկեր է։

ՍԸՐ ԷՏԿ. ՎԻՆՍԸՆԴ

Օսմ. կայս. Պանքայի ընդհ. տնօրէն Սըր Էտկար Վինսընդ իւր տիկնոջ հետ Կիւլնար գրօսանաւուն մէջ կը բնակի առ այժմ, մինչեւ որ Թագսիմի տան նորոգութիւնք աւարտին և հոն փոխադրեն իրենց բնակութիւնը։

ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ՍՆՏՈՒԿ

Թիւրքիէ կ'իմանայ թէ Պոլսոյ ապահովութեան Սնտուկն աւելի եւս պիտի բարեկարգուի հանրութեան վստահութիւնն աւելցնելու համար և թէ արդէն սկսուած է գործադրուիլ որոշեալ բարեկարգութիւնները։

ՄԻԽԱՅԵԼՈՎԻՉ ՄԵԾ-ԴՈՒՔՍԸ

Ռուսիոյ կայսեր հօրեղբօրորդի Ալեքսանդր Միխայլովիչ Մեծ-Դուքսը որ Աթէնքէն կուգար, նախընթաց օր իւր Թամարա գրօսանաւով Վոսփորէն անցաւ Օտեսա ուղեւորելու համար։

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻՔ

1889 տարւոյ միջոցին, Կ. Պոլիս—Ադր. Պոլիս—Փիլիպէ—Պէլլովայի երկաթուղին (Թրնովայէն ի Եամպօլու և Գուլէլի-Պուրկազէն ի Տէտէ-Աղաճ ճիւղերովը հանդերձ) փոխադրած է 20,403 ուղեւոր Ա. կարգի, 345,926 ուղեւոր Բ. կարգի, և 1,999,524 ուղեւոր Գ. կարգի, ընդ ամենը 2,365,853 ուղեւոր, որոց 2,159,506ը փոխադրած է Կ. Պոլսոյ արուարձանաց կայարաններ (Սիրքէճիէն ի Քիւչիւք Չէքմէճէ) և 206,347ը արուարձաններէն անդին։

ԿՈՎԿԱՍՅԻ ԱՒԱԶԱԿՆԵՐ

Մշակը կը ծանուցանէ թէ ռուսական կառավարութիւնը ձերբակալել տուած է աւազակաց խումբ մը որ Կովկասի Գարապաղի կողմէն օսմանեան սահմանագլուխն անցնելու վրայ էր։ Ձերբակալման պահուն աւազակներէ երկուքն սպաննուեր և քըսան և ինը ողջ ձերբակալուած են։ Մէկ մասը եւս թէեւ խոյս տուեր է, սակայն կը հալածուի։

ՉԷՔԻ ՓԱՇԱ

Դ. զօրաբանակի հրամանատար Չէքի փաշա, որ Բաղէշ գնացեր էր, երեք օր հոն մնալէ յետոյ Ախլաթի ճամբով Վան ուղեւորեր է։

ԹԱՀՎԻԼԱԹԸ ՕՍՄԱՆԻՅԷ

Օսմ. նոր արժէթուղթի գիներն անընդհատ եւեւէջներ կ'ունենան հրապարակի վրայ։ Երէկ իրիկուն 82 ղրշ. 30 փարայ էր, այս առաւօտ 82 բացուեցաւ և յետոյ մինչեւ 81 ինկաւ. կէսօրուան մօտ 81 ղրշ. 15 փարայ էր անոնց գինը։

Սեբաստիոյ նահանգին առաջին երկրաչափ Սէլիմ էֆէնտի միեւնոյն պաշտօնով Քարբերդ փոխադրուած և իրեն յաջորդած է Գոսովայի նախորդ երկրաչափ Ահմէտ էֆէնտի։

—Դ. զօրաբանակին զինուորական նըւագածուաց խումբ մը ղրկուած է ի Բաղէշ։

—Ելմտական քննիչ և ելմտական ժողովոյ անդամ Մէհմէտ Էմին ու Արիֆ էֆէնտիներն երէկ քննեցին Շէյխ-Իւլ-Իսլամի Դրան հաշիւները։

—Մախսուսէի Ճանք շոգենաւն երէկ Տրապիզոնէն մայրաքաղաքս բերաւ 240 նոր զինուորներ։

—Բերայի կառավարիչ Հիւսէյին պէյ պէտք եղած միջոցները ձեռք առնելու կը զբաղի, որպէս զի Ղալաթիոյ ոգելից ըմպելեաց մթերանոցներու մէջ չափէն աւելի ալքոլ և այլն չգտնուին։

—Սելանիկի յունաց մետրապոլիտն հարկ եղած արտօնութիւնը խնդրեր է կայս. կառավարութենէն, քաղաքին հըրկիզեալ եկեղեցւոյն կառուցման համար։ Ինչպէս յայտնի է, այս շինութեան ծախքը ամբողջովին պիտի հոգայ Պ. Սինկրոս։ Եկեղեցին պիտի կառուցուի 2100 քառակուսի կանգուն տարածութեամբ գետնի մը վրայ, 15 կանգուն բարձրութեամբ. հինգ դուռ պիտի ունենայ և 36 պատուհան։

—Պ. և տիկին Վամպէրի մեկնեցան մայրաքաղաքէս ի Բէշտա։

—Սելանիկի անգլ. հիւպատոս Պ. Պլընդ որ մայրաքաղաքս կը գտնուէր, իւր պաշտօնատեղին ուղեւորեցաւ։

—Նէճտ [illegible] շոգենաւն որ Պէյրութի մօտ քարանթինա կ'սպասէր, նախընթաց օր ճամբայ ելեր է դէպ ի Կ. Պոլիս։ Այդ շոգենաւին մէջ գտնուող ուղեւորաց առողջապահական վիճակը գոհացուցիչ է։

—Այս առաւօտ ի Վերին Եդուլ հըրդեհ ծագելով փայտաշէն ապարանք մը այրեցաւ։

—Կիրակի օրը ի Խասգիւղ, Եէնի Մահալլէ թաղը հրէի հին տուն մը փլաւ, սակայն մարդու կորուստ չպատահեցաւ։

—Ծովային նախարար Հասան փաշա երէկ Իտարէի Մախսուսէի պաշտօնատունը գնաց և մինչեւ իրիկուն զբաղեցաւ այդ վարչութեան վերաբերեալ գործոց կարգադրութեամբ։

—Սուլթանիյէ շոգենաւին հրամանատար դեր-գնդապետ Մէհմէտ պէյ կայս. պատուակալ թիկնապահաց կարգը դասուած է։ Մէհմէտ պէյ եղբայրն է ընկղմեալ Էրթօղրուլ մարտանաւու հրամանատար վախճանեալ Օսման փաշայի։

—Սելանիկէն կը գրեն թէ տեղւոյն հրկիզեալք, որք ցարդ վրաններու տակ կը բնակէին, սկսեր են քաղաքէն դուրս շինուած տնակներու մէջ փոխադրուիլ։

—Թաղապետական շրջանակաց հանրային մաքրութեան պաշտօնեայները միաձեւ հագուստ մը պիտի կրեն, որոց օձիքներուն վրայ թուանշաններ պիտի գտնուին։

—Կիրակի օրը բաց կառքով մը Բերայէն Շիշլի գնացող երկու տիկնայք կառքին սրընթաց արշաւելէն իրենց հաւասարակշռութիւնը կորսնցնելով գետին ինկան եւ թեթեւ վէրքեր ստացան։

—Կայս. Իրատէ մը հրամայած է որ Գոնեայի նախորդ կուսակալ Սուրուրի փաշա, որ տակաւին հիւանդ է, Զմիւռնիոյ մէջ խնամուի։

—Էսաեան և Ունճեան ընկերութեան Ադանա շոգենաւն, յորում կը գտնուին 800ի չափ ուխտաւորք, վաղը մայրաքաղաքս կը ժամանէ։ Այս ուղեւորք ի Տարտանէլ բժշկական քննութեան մը ենթարկուելով հաստատուած է թէ իրենց առողջական վիճակը գոհացուցիչ է։

—Թարապիոյ յոյն համայնքութիւնը 2000 ոսկւոյ գումար մը հանգանակած է Թաղային վարժարանի մը կառուցման համար։

—Կ. Պոլսոյ անգլ. դեսպանատան պատուակալ կցորդ անուանած է Պ. Տ. Ֆիրվին։

—Տրապիզոնի և Կեսարիոյ Հայ Հռոմէականաց առաջնորդք իրենց պաշտօնավայրերն ուղեւորեցան։

—Կ'ըսուի թէ Զինուորական բժշկական վարժարանը պիտի փոխադրուի Հայտար Փաշայի հիւանդանոցին կից կառուցուելիք շէնքի մը մէջ և թէ զինուորական Տիպպիյէն, որ ցարդ Ախըրգաբու կը գտնուի, պիտի փոխադրուի բժշկական զինուորական վարժարանին հիմնարկուած շէնքին մէջ։

—Անցեալ օր Հայտար Փաշայի ծովեզերքէն անցնող կառքի մը ձիերը խրտչելով, սկսան դէպի ծով յառաջանալ։ Կառապանը չկրցաւ զսպել ձիերը և կառքը ծովը քշուելու վրայ էր, երբ անցորդք օգնութեան հասնելով կրցան կեցնել կառքը. սակայն ձիերը կազմածները բըրցնելով ծով նետուեցան։ Կառքին մէջ գտնուած մէկ քանի իսլամ կանայք, որք ահուդողի մատնուած էին, անմիջապէս դուրս հանուեցան։ Միւս կողմէ ձիերն եւս ազատուեցան։

—Զմիւռնիոյ քարանթինայի տնօրէնը կը հեռագրէ թէ Քլազոմէնի մաքրանոցին մէջ քարանթինա սպասող ուխտաւորաց առողջական վիճակը գոհացուցիչ է և թէ ուխտաւորներէ մին իւր արդէն ունեցած աղեաց հիւանդութենէն մեռեր է։

—Անգլիական դեսպանատան պահակ Քոքաթրիս շոգենաւի նաւաստիներէ մին յաջողած է գտնել Թարապիոյ առջեւ ծովուն մէջ կորսուած մարգարտազարդ մանեակ մը, զոր տիկին մը ձգած էր։

—Ագրիանուպոլսոյ Էտիրնէ լրագրոյն մէջ կը կարդանք թէ Աւստրիոյ կայսրը 665 քիլօ պուլկարերէն տպագրական տառեր նուիրած է Ագրիանուպոլսոյ կաթոլիկ պուլկարաց վարժարանին, որ Ն. Վեհափառութեան հովանաւորութեան ներքեւ կը գտնուի։ Այս տառեր, որք ամենալաւ տեսակէն են, 8000 ֆիօրինի չափ արժողութիւն ունին։

—Երէկ մայրաքաղաքս եկան Ռուսճուքի ու Թրնովայի 56 գաղթականներ, որք իրենց համար որոշեալ տեղերը ղրկուեցան բնակութիւն հաստատելու։

—Կ'ըսուի թէ Առեւտրական եւ Հանրօգուտ շինութեանց նախարարութեան Մէքթուպճիի օգնականութեան պաշտօնը ջնջուած է։

—Ֆրէսինէ ընկերութեան Էօժէ շոգենաւը Միտիլլիի բացերը պարապ մակոյկ մը գտած և նաւապետը շոգենաւին մէջ առնլով զայն մայրաքաղաքս բերած եւ յանձնած է նաւահանգստի վերատեսչութեան։ Այս վերջինն եւս վաճառելով այդ մակոյկը, գոյացած դրամէն ուզեր է նըւէր մ'ընել նաւաստիին, սակայն սա առաջարկած է այդ նուէրն յանձնել ընկղմեալ Էրթօղրուլ մարտանաւու զոհերուն ընտանեաց համար կազմեալ նպաստամատոյց յանձնաժողովին։

—Ելմտական ժողովոյ անդամ Սիւլէյման Սուռի էֆէնտի և օգնականը Նամիգ պէյ, որք Լոնտոն ղրկուած էին օսմ. նոր արժեթղթոց տպագրութեան համար, նախընթաց օր Փարիզ ժամաներ են։

ՄԱՍԻՍ

ՀԱՆԴԷՍ ՆԻՍԱՄՍԵԱՅ

ՄԱՍԻՍԻ հոկտեմբեր 1 թիւն, որ երէկ հրապարակ ելաւ, կը բովանդակէ.

ԳՐԻԳՈՐ ՋՕՀՐԱՊ. Մեղա՛յ Տէր. Նորավէպ։

ԳՐԻԳՈՐ ՆԻԿՈՂՈՍԵԱՆ. Անտեղի կատակ Հայի «Եսօյ» վրայ։

ԱԼՓԱՅԼԱՆ. Վերգինէ. Ոլորակ։

ԼԵՒՈՆ ԲԱՇԱԼԵԱՆ. Չէրքէզներու կեանքէն։

ԱԼՓԱՅԼԱՆ. Սենեակը. Քերթուած Մօրիս Ռոլլինայի։

ՀՐԱՆԴ. Պանդուխտի կեանքէն.— Ճամբորդներ, հողէ ծրարներ։

ՖԱՆԹԱԶԻՕ. Հանդիպումը։

ԱԶԴ. ՕՍՄ. ՀԱՆՐ. ՊԱՐՏՈՒՑ

Օսմանեան Հանր. Պարտուց Վարչութիւնը նախորդ տարիներուն պէս ձրիաբար այգետէրերուն տրամադրութեան ներքեւ կը դնէ ամերիկեան այգիներու ոստեր (չաչ)։

Ի նկատ առնլով այս տարուան մեծ երաշտութիւնը, հասարակութեան տրըուելիք ոստերուն քանակութիւնը որոշուած է 100.000 տունկ։

Վարչութիւնը կ'ազդարարէ թէ անցեալ տարի տնկուած ոստերը պէտք է պատուաստուին յառաջիկայ գարնան։

Երէնգիւղի Տնկարանին մէջ, Տնկարանին տնօրէնը Պ. Էքբրէն, հրահանգներ պիտի տայ պատուաստին և պատուաստեալ այգիներուն տրուելիք խնամքներուն համար։

Կ. Պոլիս, 24 սեպտ. 3—3

Սամսոնի ազգային վարժարանի համար՝ գոհացուցիչ ամսականով վարժուհի մը կ'ուզուի, առաջնակարգ համարուելու չափ Հայկաբանութիւն, Թուաբանութիւն, Աշխարհագրութիւն; կարելի եղածին չափ Գաղղիերէն, Բնագիտութիւն Ասեղնագործութիւն գիտցող, և որ ամենակարեւորն է պարկեշտ և միանգամայն իւր հետ ունենալով, քոյր, մայր կամ ամուսին։ Մի օգնական վարժուհի մը եւս կ'ուզուի կառավարչութեան համար, ընթերցանութեան և ասեղնագործութեան ալ օգնելու։

ՀԵՌԱԳԻՐԼՈՒՐՔ

Կ. ՊՈԼՍՈՅ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵՆԷՆ

ԱՅՍ ՕՐՈՒԱՆ

ԻՏԱԼԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

ՖԻՐԵՆՑԷ, 13 հոկտ.— Արմատական Պ. Քավալոթթիի ի պատիւ տրուած հացկերոյթին ներկայ էին 540 անձինք։ Պ. Քավալոթթի և Պ. Իմպրիանի ջերմապէս ծափահարեցան։ Պ. Քավալոթթի մանրամասնօրէն հերքեց Պ. Քրիսփիի ճառն, և պնդեց թէ Նախարարապետն հակասութեան մէջ կը գտնուի։

ԼՈՒՐԵՐ ՄԱՔՍԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԷՆ

ԼԻՈՆ, 13.— Ելմտացոյցի տեղեկաբեր և երեսփոխան Պ. Պիւրտօ Մաք Քինլիի օրէնքին վրայ խօսեցաւ իւր ընտրողաց առջեւ։ Ըսաւ թէ Միաց. Նահանգաց հըռչակած տնտեսական պատերազմին մէջ վրէժխնդրական միջոցներով պէտք է պատասխանել մի և նոյն կռուանին վրայ։ Ֆրանսա ի վնաս Ամերիկայի մեծ խնայութիւններ կրնայ ընել քարիւղը Ռուսիայէն գնելով և արմտիքն Աւստրիա-Հունգարիայէն։

ԸՆԿԵՐՎԱՐԱԿԱՆՔ ԵՒՐՈՊԻՈՅ

ԱՀԼԷ, 13.—Ընկերվարականաց Համաժողովը բացուեցաւ գերման ընկերվարականաց պետ Պ. Լիպքնէխթի ճառով։ Պ. Սինկըր և Պ. Տից նախագահ ընտրեցան։

Ի ՍԵՐՊԻԱ

ՊԵԼԿՐԱՏ, 13.— Հունգարիոյ Լուտերականաց ընկերակցութեան անդամներէն շատեր Պելկրատ ժամանեցին այսօր։ Սերպիոյ կրթական Նախարարն Համալսարանի երկու դասախօսներ նշանակեց զանոնք ընդունելու։—Միլան Թագաւոր Գերմանիոյ դեսպանին հետ որսի գնաց ի Ռիսթովաց, մերձ ի Վրանիա։

Ի ՍՊԱՆԻԱ

ՍԱՐԱԿՈՍԱ, 13. — Բարձրաստիճան կղերն որ կաթոլիկ ժողովոյն մասնակցած էր՝ խնամակալ-թագուհւոյն ուղերձ մը մատոյց հաւատարմութեան և անձնուիրութեան, և յոյս յայտնեց թէ Պապն ի մօտոյ վերստին կը գտնէ իւր առաջուան վիճակը։

ԻՏԱԼԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

ՀՌՈՄ, 13, (Ա. Հ. Գ.) — Իտալական Կալուածական Վարկի Դրամատան հիմնադիրք այսօր ժողով գումարեցին։ Այս հաստատութեան դրամագլուխը կը հայթայթեն հետեւեալ խումբերը. Ազգային Դրամատունը՝ 10 միլիոն Փրանք, որուն 5 միլիոնն հնչուն դրամ. Անշարժ կալուածներու վարկի Դրամատունն 3 միլիոն. Շարժական վարկի և Ընդհանուր դրամատուներն՝ 5 միլիոն. Պ. Լածծարոնի և իւր խմբակը՝ 5 միլիոն. Միլանի Միութիւնը՝ 3 միլիոն. Վենետիկի Ապահովագրութիւնք՝ 2 միլիոն. գերման դրամատեարք 5 միլիոն։

Թուրի և Գոծծէգգօ դրամատուներն իրենց վճարումները դադրեցուցին, Սփէծիայի Պուֆիչօ Նաւարաններուն սնանկութեան պատճառաւ։

ԴՐԱՄԱԿԱՆ

ՂԱԼԱԹԻՈՅ ՊՈՐՍԱ

Ղալաթիա, 2 Հոկտ.

ԸՆԹԱՑՔ ՓՈԽԱՆԱԿԱԳՐԱՑ

3 ամիս Լոնտրայի վրայ	108 1/4
8 » » »	23 25

Օսմանեան Քօնսօլիտէ

Երէկ երեկոյ գոց. (Միաց. Օ. Սերի	20 2
Առաւօտուն բացուեցաւ	19 35
Կէս օրին »	19 33
Թահվիլաթը Օսմանիէ	81 15
Իսթիգրազը սաիւլէ	— —

ԸՆԹԱՑՔ ԱՐԺԷԹՂԹՈՑ

Փոխառութիւն	A. Սերի	41 1/2
»	B. »	23 1/2
»	C. »	19 35

ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐ

Սօսիեթէ ժէնէրալ	Անգլ. Լր.		5
Գրէտի ժէնէրալ	Ֆրան.	»	9 23
[illegible]	»	»	7
[illegible]	»	»	4 35
[illegible]	»	»	507
[illegible] երկաթուղի		Ֆր.	79 1/2
Բաժնեթուղթ Լօտերիոյ	Գ. կ.		152

ԸՆԹԱՑՔ ԴՐԱՄՈՑ

Օսմանեան ոսկի	ղրշ.	100
20 Փրանքնոց	»	87 5
Անգլիական ոսկի	»	110
Մարք (գերմանական ոսկի)	»	106 20
Իմբերիալ	»	91 3[illegible]
[illegible]	»	51 12
[illegible] Թղթադրամ	»	7 43
Մեճ. արծաթ. (տարբ.)	»	107 36
[illegible]	»	103
Հինգնոց	»	102 30
Մէթալիք	»	100 10
[illegible]	»	— —

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՊՈՐՍԱ

Բարիզ, 13 Հոկտեմբեր, ժամ 3 վայր. 45 երեկոյ

Ֆրանսական Ռանթ 3 %	94 35
» » 4 1/2 %	106 40
Օսմանեան քօնսօլիտէ Սերի Դ.	18 65
Օսմանեան երկաթուղի	81
» Պէժիի բաժնեթուղթք	— —
Պանք Օթօման	632 50
Գրէտի Լիօնէ	77 75
Իտալական Ռանթ 5 %	94 25
Հելլենական 5 %	475
Բրիօրիթէ Թիւրք (1890)	406 25
Եգիպտական միացեալ	492 50
Պանք տը Բարի	851 25
Օսմ. մաքս. արժէթուղթ	— —
Սուեզի ջրանցք	2385
Եգիպտական արտաքին	76 11/32
Րիօ Թինթօ	— —
[illegible]	— —
Չէք Լոնտրայի վրայ	25 29

Լոնտոն, 13 Հոկտ. ժամ 5 վայր. 15 երեկոյ

Անգլ. քօնսօլիտէ	95 1/4
Օսմ. » Սերի Դ.	18 1/4
» » » Ա.	41 1/2
» » » Բ.	23 1/2
» » » Գ.	18 1/4
Փոխառութիւն 1877	100 3/4
Պանք Օթօման	15 1/8
Եգիպտական միացեալ (իւնիֆիյէ)	97
» առանձ. (բրիվիլէժիէ)	102
[illegible] Սուէզ	96
Տօմէնիալ (փոխառ. Րօչիլտ)	102
Հելլենական 5 %	— —
Մօնօբօլ »	— —
Ռուսական 1889	108
Փոխանակութիւն Բարիզի վրայ	25 53

Վիեննա, 13 Հոկտ. ժամ 4 վայր. —

Օսմանեան երկաթուղի	38 50
» Պէժիի բաժնեթուղթք	136 25
Փոխանակութիւն Լոնտոնի վրայ	114 90

Պերլին, 13 Հոկտ. ժամ 3 վայր. 30

Փոխանակութիւն Լոնտոնի վրայ	20 3
Ռուսաց Թղթադրամ	— —
Օսմանեան երկաթուղի	80 70
Օսմանեան քօնսօլիտէ Սերի Դ.	— —

ԲԱՐԻԶ ԲԹԻԹ ՊՈՒՐՍ

Բարիզ, 13 Հոկտ. ժ. 10 վ. 30 երեկոյ

Ֆրանսական Ռանթ 3 %	94 08 3/4
Օսմանեան քօնսօլիտէ Դ.	18 35
Օսմանեան երկաթուղի	81

ՆԱՄԱԿ ԱՌ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

ԿԷՏԻԿ ՓԱՇԱ, 29 սեպտ.

Գիտնալով որ արժանաւոր յիշատակութեամբ պէտք անցնինք անշուշտ զմահ Թորոս աղայի, նորոգ հանգուցելոյ, Կիւլպէնկեան, որդւոյ մահտեսի Աւետիք աղայի, մեծահռչակ Նահապետի տանն Կիւլպէնկեանց, որպէս յիշեց Խրիմեան Հայրիկ ի համառօտ կենսագրական ակնարկին, յեկեղեցւոջ, կամեցայ առիթ առնուլ գալ՝ ազդել ձեզ սուղ ինչ տեղեկութիւն Կիւլպէնկեան այս ճիւղին վրայ որ ոչ նուազ արժանի է ի ծանօթութիւն գալ լրութեան ազգիս։

Հայր հանգուցելոյն՝ մահտեսի Աւետիք աղա Կիւլպէնկեան, երէցն չորից եղբարց որոց մին էր նաեւ մահտեսի Կիւլապի աղա, հայր արդի ծանօթ հարազատաց, Սերովբէ Չէլէպի Էֆէնտիի, յաւէտ ողբացելոյ, և Սարգիս Էֆէնտիի, արժանընտիր շառաւղաց այնր ոստոյ, հռչակեալ էր յոյժ, ընդ ամենայն կողմանս Կապադովկիոյ, խորախորհուրդ իմաստութեամբ իւրով եւ ուղղամտութեամբ եւ պատկառելի յաչս ամենեցուն, ազգայնոց եւ օտարաց։ Հայր հասարակաց, ամենուն վըրայ անխտիր իւր խնամքը կը տարածէր, ազգային եւ օտար հաստատութիւնք, բարեգործական ամէն ձեռնարկութիւնք բաժին ունէին իւր մեծափարթամ հարստութենէն։

Իսկ որ զարմանալին է, այն ալեւորեալ ծերութեան մէջ և այն ժամանակին զոր այժմ [illegible] անուամբ կը մկըրտեմք, դպրոցաց վրայ այնպիսի սէր եւ խանդաղատանք կը ցուցնէր որ եւ զայժմուս կարէր ի հիացումն եւ յամօթ կըրթել։

Իւրեանց իսկ ծախիւք կառուցեալ եւ ազգին նուիրեալ Թալասու Վարդ-Պատրիկեան դպրատունն ուր կը յաճախէինք մեք յայնժամ, մանկտի դեռահաս, գրեթէ հանապազօր կ'այցելէր ծերունի Նահապետն, սամոյրենիս զանձամբ արկեալ, փառացի տեսլեամբ եւ պատկառելի կերպարանօք. կը հսկէր վարժատան բարեկարգութեան, կը քաջալերէր զուսուցանող մարմինն, հոգի եւ եռանդ կ'ազդէր ուսանողաց։

Քանի՜ քանի անգամներ իւր հայրական յորդորներն վայելած եմ, ոչ միայն ես, այլ եւ ամենեքին որ ընդ իս յայնժամ աշակերտեցան նոյն յարկի։

Երախտագէտ եւ զեղուն սրտիւ կը յիշեմ զայս մինչեւ ցայժմ զոր եւ պարտ անձին վարկայ բարձրաբարբառ իսկ հըռչակել սոյն առթիւ։

Զի՛ հազուագիւտ են, այժմ իսկ, այսպիսի օրինակք, եւ կ'արժէ որ ճանչցուին եւ գնահատուին ապագայ սերունդներէ։

Երէց որդի հօր, հայրենի առաքինութեանց ժառանգորդ եւ շարունակող էր հանգուցեալ Թորոս աղա, հայր որդւոց և թոռանց, Նահապետ իւր կարգին, վըշտաբեկ յազգի ազգի ձախողուածոց, ցաւագնեալ եւ, ի բազմաց հետէ, մեկուսացեալ յամբոխէ։ Այր բարեբարոյ, քաջախորհուրդ, ողջամիտ եւ բարեպաշտ, լի ամօք եւ հեծութեամբ, ձեռնտու կարօտելոց եւ բազում ազգօգուտ եւ մարդկօգուտ ձեռնարկութեանց մասնակից։

Գերդաստանին պատուոյ և փառացը վերջին ծայր նախանձախնդիր, տէրութեան եւ ազգին միապէս հաւատարիմ, քաղցրահամբոյր եւ հեզահոգի անձ մ'էր հանգուցեալն զոր կարի իրաւամբ ողբացինք ամենեքին։

Կը մաղթենք յերկնից որ իւր միակ որդին եւ նորա բողբոջ թոռունք տակաւ աճելով եւ զարգանալով՝ ամրացնեն Կիւլպէնկեան հսկայ եւ մեծատարած արմատոյն այն ոստն որում իրենք կը պատկանին և որ արդ իսկ ցնցեցաւ ուժգնապէս։

Յ. ԹԻՐԵԱՔԵԱՆ

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Այս շաբթու Ն. Պէրպէրեան տպարանէն ի հրապարակ ելաւ պատկերազարդ փոքրիկ այլ պատուական դասագիրք մը՝ որուն հարիւրաւոր ուսուցիչք և հազարաւոր հայ մանկտիք առնէ մ'ի վեր կըսպասէին անձկագին։ Գրքոյկին անունն է՝ *Ուսումն Քրիստոնէական Հաւատոյ Հայ. Ս. Եկեղեցւոյ*. յօրինողն է՝ Սահակ Ա. Խանճեան որ՝ երեսնամեայ ուսուցչական իւր բազմարդիւն փորձառութեամբ՝ դիւրատար ու դիւրագնի 260 էջերէ բաղկացեալ սոյն հատորին մէջ երեք մասանց բաժանմամբ ԾԴ դասերու մէջ ամփոփած է մեր կրօնի հիմնական տարերքն ու ամենէն պիտանական գիտելիքն, և—ի մեծ բաղդ ուսուցչաց և ուսանողաց—յաջողած ի բաց վանել անտի բոլոր այն վերացեալ մշուշապատ բացատրութիւնքն ու սեթեւեթեալ ոճոյ ուղեղատանջ աւելորդաբանութիւնքն որք առ մեզ լոյս տեսող կրօնի դասագրեանց գլխաւոր թերին կը կազմեն առ հասարակ։ Գործին այս երկրորդ հրատարակութեան առթիւ,— զի առաջնոյն հազարաւոր օրինակներն սպառած էին կարի սուղ միջոցի մը մէջ—Խանճեան էֆ. կարեւոր սրբագրութիւններ և երկու փորմայի ալ յաւելում մ'ըրած է անոր վրայ, և վերստին դիմելով Պատկ. Կրօն. Ժողովոյն, անոր գնահատմանն ու վաւերացմանն արժանացած է։

Հայ վարժարանաց Դասատուաց և Հոգաբարձութեանց՝ սոյն գրքոյկին հրատարակութիւն իմաց տալու առթիւ, պարտք կ'զգամք շնորհաւորել սաստ զՍահակ էֆ. Ա. Խանճեան իւր յաջող աշխատասիրութեանն համար, այլ կարծեմք թէ և'ս առաւել շնորհաւորութեան արժանի են այն նորածիլ հայ մանկտին որ իրենց Նախահարց սրբազան հաւատքն ուսանելու համար այսքան խնամեալ ու կատարեալ դասագիրք մը ձեռք կը ձգեն։ Ա.

ԻՐԱԿԱՆ ԿԵԱՆՔԷՆ ԿՏՈՐՆԵՐ

ԲԱՐԻԶ, 5 Հոկտ. 1890

Ո՛ւ և է նիւթի վերնագիրը գրել՝ շատ դիւրին է, մանաւանդ երբ միօրինակ է այն և երբ դատապարտուած է միշտական ճակատագիրը ըլլալ, ամէն տեսակ նիւթի, որոնք երբեմն նոյնիմաստ են և նմանօրինակ, իսկ երբեմն տարօրինակ, աննման, հակատիպ ևն ևն։ Միակերպ վերնագրի համար շատ խորհիլ հարկաւոր չէ, մտքի խորերէն հեռացած է, լեզուի վրայ է, գրչի ծայրին վրայ։ Բաւական է միայն թղթի կտորը տարածել. գրիչը միտել մէկ հարուածով և մէկ հարուածով ալ արտադրել՝ ակնթարթի մը մէջ տեղի կ'ունենայ։ Գրագէտը կամ գիտնականն իրենց երկար կամ կարճ գրութեան տաժանակիր—մտքի համար է այս անտարակոյս—երկունքի առաջին և դիւրատար քայլն այսպէս գրչի մէկ հարուածով կ'առնուն երբ վերնագիրն կ'արտադրուի,—օրինակ, [illegible] (1) ևն ևն։ Առաջին սովորական քայլէ ետք, հետեւեալ յարակից քայլերը փոփոխել մերթ նոյն ներդաշնակութիւնով, մերթ նոյն ձեւով, մերթ նոյն համաձայնութիւնով և մերթ նոյն պահանջով, հոս է երկունքն, հոս է խորհիլն, խոկալն, խուզարկելն, ընտրելն, հնարելն, ստեղծելն, ջնջելն, ձեւելն, կարկատելն ևն ևն։ Մեծ կրնճիռն հոս է։ Ժխորին մէջէն զուտ եւ առանց մեղադրանքի դուրս ելնելն ամենէն դժուարին պահանջն է, որ կը ծանրանայ գրողին վրայ։ Ինչեւիցէ իմ խնդիրէն շատ չ'հեռանամ, որովհետեւ նիւթէս է որ կը հեռանամ։ Միայն այս կ'ուզեմ յայտնել որ ո և է գրող անսահման կերպով ուրախ է, երբ իւր նիւթի վերնագիրն իսկոյն կ'արտադրէ թղթի ճակատը, իսկ յետո՞յ.— հոսանքին մէջն է այլ եւս, կը կորսուի շատ անգամ ինքն իւր խոհերի հետ, վերստին կը գտնէ ինքզինքն, անհնար նիւթերի հաւաքածոյ մը կը փռուի իւր մտքի առջեւ. մինչեւ որ մէկ, երկու, երեք կամ տասն նիւթ կը կաշկանդէ, միւսներն կը խուսափին, մինչեւ որ կորսուածն գտնէ կամ յափշտակէ, գտնուածն կը կորսուի, իսկ այս յոգնատանջ երկունքի մէջ իւր ֆիզիքական դիմագիծն կը ներկայէ մի մարդ՝ տարտամ, խոժոռերես, սրատես, սաստիկ ուշադիր, կորագլուխ, կամ գլուխն հակուած աջ կամ ձախ ուսին վրայ, կորաքամակ, կծկուած, ընկճուած ևն ևն։ Բարեբաղդաբար միտքը կը թափէ և կը թափէ իրարու ետեւէն գրչի ծայրին վրայ, և գրիչն անգիտակցօրէն կը շարէ և կը շարէ։ Եթէ ես լինէի միլիոնատէր միլիոններ կը նուիրէի յօժարակամայն մեծ գիտնականին— զոր Եւրոպան դեռ չէ ծընած— որ կարող պիտի լինէր [illegible] եւ [illegible] այս մտերիմ աշխատակիցների, մէկն կենդանի միւսն անկենդան, հըզօր բայց անմեկնելի մեքենականութիւնը բացատրել, կամ որոշ իմաստ մը տալ անոր։ Գիտնական Եւրոպան կ'որոնէ դեռ, տեսնենք ո՞ր մայրն պիտի ընծայէ այդ գիտնական [illegible] (բառին բուն իմաստով)։ Խնդրէս բաւական շեղեցայ, վերջակէտ մը կը դնեմ հոս և անոր կը դառնամ։

⁂

Իմ վերնագիր միշտ միեւնոյն է, բայց նիւթն ուրիշ, տարբեր, զոր կ'ընծայէ մեզ ամէն նոր օր։ Կարգի օրէնքով ներկայ նիւթն պէտք էր [illegible] լինէր, բայց ստիպուած եմ զեղծում գործել բացառութեան օրէնքով եւ գրականական կամ նկարչական ընել զայն։ Խնդիրներ կան, որոնք երեկին լինելով, եթէ այսօր միան կամ ամիս մը ետք, միշտ [illegible] խնդիր են և կը միան. խնդիրներ ալ կան, որոնք այսօրուան լինելով եթէ վաղը կամ ուշ միան, կը հիննան։ Այս կարգի խնդիրներէն է Եօժէն Տըլագրուա— Eugène Delacroix —. անոր համար առաջնութիւն անոր կը նուիրեմ։ Ո՞վ է Տըլագրուա.— Նկարիչ։ Օրուան նշանաւորագոյն նկարիչներէն մին։ Նկարիչ բառ մ'է բանաստեղծական, բառ մը վիպական, բառ մը նկարչական, փիլիսոփայական, [illegible], գեղեցիկ, ճաշակի ևն ևն, և Տըլագրուան՝ որին [illegible] տիտղոս նուիրեց ֆրանսական Ակադեմիան, բանաստեղծ էր, վիպասան, գրագէտ և բնութիւնը ստեղծագործող, իսկ այս ամէնը մէկտեղ հաւաքելով [illegible]։ Բնութիւնը ընդօրինակելու համար այնչափ նրբազննին և ճարտար հայեացք ունէր— ինչպէս սովորական է ամէն տաղանդաւոր նըկարչի— որ վրձինի մէկ հարուածով կենդանի կը տպէր իւր առարկայն, ինչպէս լուսանկարչութիւնն կ'արտատպէ։ Իւր գրիչն իւր վրձինն էր, եւ իւր միտք՝ իւր տաղանդ։ Տըլագրուան մեռած է բաւական ժամանակէ ի վեր. իւր արձանի բացման արարողութիւն կը կատարուի այսօր։ Ֆրանսայի զաւակ մ'է ինքն, իսկ այն ժողովուրդն երեխա՝ որ իւր արձանի ներքեւ եւ չուրջ կը խռնուի, և իրեն կը նուիրէ իւր սրտաբուղխ երախտագիտութիւնը, [illegible] ժողովուրդ մ'է։ Տըլագրուան իբրեւ նշանաւորագոյն նկարիչ կը պատկանի ամէն ազգի, կամ թէ քանի որ տաղանդի մէջ ազգայնութեան խտրութիւն չ'կայ, ոչ մէկ ազգի չ'պատկանիր նա, այլ նկարչական գիտութեան։ Տըլագրուան ուրեմն համազգային կամ աշխարհաքաղաքացիէ իբրեւ նկարիչ։ Ֆրանսիան ամբողջ լրագրութիւնը կը խոստովանի թէ Եօժէն Տըլագրուան պատմութեան մէջ անկորուստ յիշատակ մ'է և իւր կեանք — մանաւանդ իւր նորընծայական կեանք— աղէտներու շարք մ'է։ Իւր գերագոյն գործերի հակառակ, որոնք իւր տաղանդէն և վրձինէն կը բղխին, ինչպէս ջուրն իւր աղբիւրէն, բարոյապէս ընկճուած մ'է։

Հարուած հարուածի վրայ, յարձակում յարձակումի վրայ կարկուտի պէս կը տեղացնեն իւր գլխին հակառակորդներն։ Անդրդուելի ոյժ մ'է սակայն հանդէպ աննշան և տկար ոյժերի, որոնք իւր համբաւը կ'արատաւորեն միայն, ուրիշ ոչինչ։ Տըլագրուան յարաճուն, բեղմնաւէտ և միշտ վերածնուող՝ կը տոկայ, կը սանէ և կը համբերէ այս պայքարին մէջ, յոյսում իւր նորընծայ հակառակորդները իբրև պատճենութիւն առնելով, գործունէութեան և մրցման արարուած մը կը բանայ նկարչական գիտութեան մէջ։ Փոխանակ խորտակելու իւր վրձին, յաղթուած նկատելով ինքզինքն, կը դիմադրէ, կը մրցի, կը յարատեւէ և կ'աճի. Առանց մրցումի՝ նկարչութիւնը չկրնար ստեղծագործել, այս է իրեն սկզբունքն։ «Գեղարուեստական նորագոյն դպրոցներն, ըսած է իւր բարեկամներին, կրցան սորվեցնել գեղեցիկը, ինչպէս կը սորվեցնեն գրաճշիւը։ Առարկայի մը ամէն յատկութիւնները հաւաքել, անջատել, յապաւել, ստեղծել կամ ջնջել, մարդու մը ամէն մէկ կերպարանափոխութիւններն և նորա տարիքի ամէն մէկ հասուածքը ուսումնասիրել և ընդհանուր ներդաշնակութիւնը չխանգարել, որ կը տիրէ բնութեան մէջ, ասոնք են որ կը կազմեն գեղեցիկն, և այս գեղեցիկն է —իւր բոլոր երեւոյթներով— զոր պէտք է բարգաւաճեն հեղինակները՝ մրցելով և միշտ մրցելով։» Տըլագրուան այս կռուին մէջ կը մնէ կամովին, և նըկարչական գիտութեան մէջ [illegible] ներմուծելով է որ այնչափ չարաչար անուանարկութիւններու զոհ կը լինի։ Այս մեծ հանճար ուրեմն նկարիչ մը չէր միայն, այլ աննկուն մրցող մը։ Երբ իւր նկարչական առաջին պաստառ ուր վրայ նկարած էր Տանթէ և Վիրգիլիոս ի ցոյց կը դնէ հետաքրքիր հասարակութեան առջեւ, միայն մէկ մարդ կայ որի նայուածքը կը գերուի, այդ մարդն է կոմս Կրօս, ինքն ալ նկարիչ, նկարչի մը մեծ ոյժը հասկցող։ Դեռ նորածին իւր արհեստին մէջ՝ կը խոստանար օր մը մրցակից հանդիսանալ Տըլագրուայի, մրցակից մը եւ ոչ ուրիշ բան։ Կը հետաքրքրուի, կը ճանչնայ նկարին հեղինակն եւ իւր առաջին ծանօթութեան մէջ կը հրաւիրէ իւր ապագայ մրցակիցն որ իւր տան մէջ աշխատի և իւր ծախքով ապրի։ Կոմս ինչպէս իւր տիտղոսն կը ցուցնէ, կայսրութեան նկարիչ մ'էր, իսկ Տըլագրուան ժողովրդեան. մէկը կայսերական ընտանիքին կը պաշտուէր իսկ միւսը ժողովուրդէն. բարոյականի եւ նիւթականի այս [illegible] գոյութիւն չունէր կոմս Կրօսի համար, անոր համար աղքատ բայց հզօր տաղանդի մը կենակցութեան կը բաղձայ։ Տըլագրուան իւր կողմէն կը գնահատէ նկարիչ կոմսը, բայց կը մերժէ նորա առաջարկութիւնը, անոր հետ աշխատակցիլ և անոր հետ բարգաւաճիլ։ «Ես զձեզ շատ կը պաշտեմ, պարոն կոմս, կ'ըսէ իբրեւ նորատի և տաղանդաւոր արհեստակից, ձեր մէջ հակում կայ դէպի աճեցում, դուք կրնաք այնչափ զարգանալ, որ ինձ դէմ մըրցիք, միայն թէ ստիպուած եմ մերժել ձեր հրաւէրն, և կը նախընտրեմ կեբենի քով ապրիլ, ուր ինքնակամ կը գործեմ և ուր արտաքին ո և է ազդեցութիւն չ'իշխեր վրաս»։» Տըլագրուան ինքնիրեն կը միայ և ինքն իրեն կ'աճի։

Ժամանակակից նկարիչներէն բարձրագոյն նկարիչ մը կը լինի, գրագէտներէն բարձրագոյն գրագէտ մը։ Նըկարելով Տանթէ, Շէքսփիր, Պայրըն և Կէօթէ, կ'ստեղծագործէ զանոնք և կը վերածնէ։ Մէկն իւր գրիչով, միւսն իւր միտքով, ուրիշն իւր երեւակայութիւններով այնչափ գրագէտ չէին, որչափ երբ Տըլագրուայի վրձինի տակէն կը սահէին մէկ միւսի ետեւէն։ Անիկայ այն բանը կ'ընէ, ինչ որ Կէօթէ իւր ձեռակերտ Ֆաուսթի համար կը վկայէ,— թէ «Ֆաուսթի ամէն մէկ նկարագիրն ես ինքս ստեղծեցի, բայց նա կը գերազանցէ զիս անոնց ամէն մէկին մէկ մէկ ճաշակ տալով։» Իւր հակառակորդներն անգամ կը վըկայեն թէ,— Տըլագրուա նկարչական արհեստին մէջ խանդավառ բանաստեղծ մ'է. [illegible] և [illegible] նոյնանիշ կ'ընդունին։ Նա կը վերածնէ այս արհեստ և կը բարենորոգէ։ Այս հեղինակն ինքն է, որ առաջին անգամ լինելով նկարչական գիտութեան մէջ կը մոցնէ բնութիւնը գծել, օդերեւութական ամէն երեւոյթ իրենց յատուկ գոյներով պաստառի վրայ պատկերացնել—մինչ եւ մինչեւ իրեն օր տակաւին հին մեթոտի նկարչութիւնն եկեղեցիի չորս պատերէն դուրս չէր ելած—մթնոլորտը նկարել ևն, ևն։ Եթէ այդ վերանորոգող ոյժը չի լինէր, մեր դարը Գլօտ Մօնէ և Գամիլ Բիսարօ չպիտի ունենար։ Վերջապէս Տըլագրուա նկարիչի հետ մեկտեղ մելամաղձիկ մ'է։ Մեծ մարդերի—որոնց նման աշխարհք հատով կը ծնի—տխուր բողէներն ունի միշտ, որոնք շատ բան տեսած են և զգացած, երկար ապրած են, երկար խորհած և երկար երազած։ «Մեր դարու պատմութիւնը, կը գրէ իւր բարեկամներէն մէկին, տարաբաղդ նկարիչների երկար շարք մը կը ներկայէ մեզ։ Կոմս Կրօս, իմ յարգելի մրցակից, որին ոչինչ չէր պակսեր, վերջ ի վերջոյ ճահիճի մը մէջ կը մեռնի. Լէօբօլտ Ռօպէրթ, զոր պաշտեցին, իւր թշուառութիւններին չկրնալով տանել ինքզինք մորթեց։ Անոնք որ ինքզինքնին չեն լքեր, ժողովուրդն է որ կը լքէ զիրենք։ Մոռացկոտութիւն և անտարբերութիւն մեր աչքի առաջն է միշտ և զմեզ կ'սպասնէ։» Այսպէս Տըլագրուա, մեր դարի նշանաւորագոյն նկարիչներէն մին, կը մարի իւր ցնցումներին մէջ հեռի իւր ազգականներէն և իւր պառաւ սպասուհիի գիրկին մէջ։ Այսօր հոկտ. 5ին կէսօրէն ետք ժամ 3ին հանդիսաւոր կերպով կատարուեցաւ իւր արձանի բացման մեծ արարողութիւնը Լիւքսանպուրկի պարտէզին մէջ։ Հասարակաց կրթութեան Նախարարը պերճախօս լեզուով մը դրուատեց նըշանաւոր նկարչին անմահ յատկութիւններն։ Արարողութեան սկիզբէն մինչեւ վերջ զինուորական նուագածուներէ ընտիր խումբ մը նուագեց անընդհատ։ Բարիզի ամբոխն հոն լցած էր հետաքրքրութեան հոծ։ Ուր որ մի ցոյց կայ, մի ներկայացում, մի արկած ևն, Բարիզի ամբոխն հոն է։ Հանդէսը կ'աւարտի, ոչ ոք չմնար, միայն Տըլագրուան կը մնայ տնկուած հոն։ Ժողովուրդը մոռցաւ իւր մէկ ժամ առաջ այնչափ եռանդագին կերպով պաշտած մարդն, այսպէս նա կը մոռնայ ամէն մեծ մարդիկ և հանճարներ։

⁂

Գրական պատառ մ'ալ Սարա-Պէրնարի կեանքէն։ Երկրագնդի վրայ նըմանը չունեցող դերասանուհի մ'է, կը յայտնէ իսկոյն ամէն մարդ—լինի ֆրանսացի եւ ուրիշ—երբ խօսք կը բացուի վրան։ Սարսէ, որ իւր [illegible] վերնագրով յօդուածներով և ուրիշ գրուածներով առաջնակարգ գրողներէն մէկն է, կը գրէր մի օր թէ, Ֆրանսական ինչպէս նաեւ օտար թատրերգութիւններ, Սարա-Պէրնարի նման թատրերգակ դերասանուհի մը ունեցած չեն եւ չպիտի ունենան։ Միայն դերասանուհի չէ նա, այլ նաեւ թատրերգակ, գրագէտ և քննադատ։ Ժամանակ եւ տեղ չեն ներեր երկար գրել իրեն մասին, միայն դէպք մը պիտի պատմեմ, զոր հրատարակեցին Բարիզի բոլոր լրագիրներ, եւ որ թատերասէր ժողովուրդ շատը յուզեց։ Սարա-Պէրնար Բօրթ-Սէն-Մարդէն թատրոնին մէջ Կղէօպատրայի ներկայացումն պիտի տայ ամէն երեկոյ։ Անցեալ օրերէն մէկին մէջ՝ երբ թատրի վրայ փորձ կը կատարեն՝ իրեն պաշտօնակից Կարնիէ իբր թէ կը յանդգնի ապտակ մը զարնել իրեն, զայրացած լինելով մի կծու նկատողութեան վրայ, զոր Սարա-Պէրնար կ'ուղղէ իւր պաշտօնակցին։ Այս անփայելուչ դէպքին վրայ իբրեւ թէ Սարտու ալ վիրաւորուած լինելով իսկոյն կը մեկնի և կ'երդնու այլ եւս ոտք չկոխել հոն։ Սարտու ծանօթ է հասարակութեան իւր թատրերգական գըրուածներով և հեղինակն է [illegible], ներկայացուելիք խաղին։ Այս լուր ժողովուրդի մէջ կը տարածուի շուտով, զանազան լրագրութիւններ ներկայացուցիչ կը ղրկեն Սարա-Պէրնարի քով, ճիշդ տեղեկութիւններ առնելու տարածուած լուրի մասին։ Սարա-Պէրնար [illegible] պատմութիւնը գաղտնի կը պահէ, և երկմիտ ժողովուրդը կը հանդարտի։ Ուրիշ անգամ երբ առիթ ունենամ, իրեն թատերական և գրական հանճարին վրայ երկար կը գրեմ։

ՍԻՄՈՆ ՅՈՎՆԱՆԵԱՆ

---

(1) Իրական կեանքէ կտորներ (ես ինձ ակնարկելով)։

ԱՌ ԸՆԹԵՐՑՈՂՍ

Ստորագրեալս պատիւ ունի ներկայիս ծանուցանել իւր բազմաթիւ յաճախորդաց թէ Եւրոպայի հռչակաւոր գործարաններէն այն ինչ բերել տուած է նոր և վերջին կատարելագործութեան համեմատ մեքենայներ, ժամանակիս պահանջմանց ըստ ամենայնի յարմար, որոնցմով կարելի է ամէն չափով և ձեւով լուսանկարներ արտադրել ի կատարեալ գոհունակութիւն ամենէն դժուարահաճ յաճախորդաց։

Մեր բազմաթիւ բարեկամք կարող են համոզուիլ մեր ըսածներուն պարզ այցելութեամբ ի մեր գործատուն, ուր կարող պիտի լինին ունենալ դիւրամատչելի գներով ընտիր և ամենամաքուր լուսանկարներ։ Ստորագրեալս միշտ անձամբ կը հանէ լուսանկարներն առանց երկրորդական պաշտօնեից ձեռքը ձգելու։

Արդէն 25 տարիներէ ի վեր մեր յաճախորդաց նկատմամբ մեր տան ունեցած բարւոք յարաբերութիւններն ինքնին բացայայտ ապացոյցներ են մեր ըսածներուն ճշդութեան։

Օդը երբ ամպոտ է, լուսանկարն երբեք տարբերութիւն չունենար. գործատանս մէջ թէ արանց և թէ կանանց համար մասնաւոր վարսայարդար մը կը գտնուի։

ԼՈՒՍԱՆԿԱՐՉԱՏՈՒՆ
ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱՆՏՐԻՈՄԷՆՈ
99, [illegible], 99
129 Կ. Պօլիս 40—90

[illegible]
ԱՌԱՋԻՆ ԳԻՐՔ
[illegible]
Գին 4 Ղշ.
[illegible]

Փարիզի Ակադեմիայէն նշանաւորութեան մրցանակ ստացած
ՏՕՔԹՕՐ Գ. ՃԻՎԱՆԵԱՆ,

Կ'ընդունի հիւանդներ, ամեն առաւօտ ժամը մինչեւ 8 Բերա Աղա Ճամի, Բիրէ Մէհմէտ փողոց թիւ 13։

Կը դարմանէ մասնաւորաբար ջղային, թոքային, սրտի, և գլխու վրայ եղած հիւանդութիւնները (աչքի, ուղեղի, ականջի, կոկորդի և այլն) ծննդական գործարանաց հիւանդութիւնները, կը դարմանէ նաեւ ամեն տեսակ վէրք եւ վիրաբուժական գործողութիւնք առանց ցաւի կը կատարէ նոր մեթոտով։

Հինգշաբթի օրերը ձրի կը նայի։

138 2—3

ՋՐԱԲՈՒԺԱԿԱՆ ՄԵԾ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՅ
Բերա, Սաքըզ աղաճ, Թիւ 15, 17, 19 [Աղա Ճամի]

Իր տեսակին մէջ միակ հաստատութիւն յԱրեւելս
Ամենէն զօրաւոր և կատարելագործեալ գործիներով օժտուած
Պերճանք, հանգստութիւն և աժանութիւն ի միասին
ՏՆՕՐԷՆ՝ ՏՕՔԹՕՐ ՍԻՈԴԻՍ
Նախկին [illegible] Բժիշկ Բարիզի հիւանդանոցաց

ԼՈԳԱՐԱՆ ԵՒ ՏՈՒՇ ԱՄԷՆ ՏԵՍԱԿ
Ելեկտրականութիւն—Կախում—Մարմնամարզ
Վարսայարդար—Մասաժ—Ոտնաբոյժ
Ջերմաչափութիւն Արանց

ԿԸ ԴԱՐՄԱՆՈՒԻՆ ԵՒ ԿԸ ԲՈՒԺՈՒԻՆ
Անարիւնութիւն, խոցեր, Ջղախտութիւն, Անկարողութիւն, Անդամալուծութիւն, Ստամոքսի հիւանդութիւնք, ևն. ևն.

ՄԷԿ ՔԱՆԻ ԳԻՆԵՐ

ԼՈԳԱՐԱՆՔ	Բ կարգի 4 ղրշ.	—Ա կարգի 6 ղրշ.
ՊԱՐԶ ՏՈՒՇ	Բ » 3 »	—Ա » 5 »
ՏԱՔ ՋՈՒՐ ՏՈՒՇ	Բ » 5 »	—Ա » 7 »

Դեղերով լոգարաններու համար գիները կը զանազանուին դեղին գնոյն համեմատ.

Բաժանորդագրութեան համար 10 % զեղջ
Դպրոցներու եւ ընտանեաց համար մասնաւոր պայմանք 35

ԲԱԹՐԻՕԹԻՔ

ԿԵՆԱՑ ԵՒ ՀՐԴԵՀԻ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ.
PATRIOTIC Life and fire assurance Company
Հիմնեալ ի 1824

Դրամագլուխ	Անգղ. Ոսկի	1,500,000
Վճարեալ դրամագլուխ	» »	121,984
Պահեստի դրամ	» »	250,000

Սոյն ընկերութիւնը դիւրամատչելի պայմաններով ամէն շէնք, կարասիք և ապրանք հրդեհի վնասուց դէմ կ'ապահովագրէ։

Տնօրէն ընդհանուր Թուրքիոյ
ԱԼՊԷՐԹ ՀՕՖՄԱՆ

Ապահովագրութեանց և այլ տեղեկութեանց համար դիմել առ
Կ. Պոլսոյ մասնաճիւղի տեսուչ
ՄԻՀՐԱՆ Յ. ՍԱՐԸԵԱՆ
Գործակալ Ապահովագրական Ընկերութեանց
Սթամպօլ, Պաղչէ-Գաբու թիւ 27, մաքսատան դիմաց։ 172

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

2

ՆՈՐԹԸ ԲՐԻԹԻՇ ԸՆԴ ՄԸՐՔԸՆԹԱՅԼ

ԴՐԱՄԱԳԼՈՒԽ Անգլ. Ոսկի 3,000,000. ՊԱՀԵՍՏԻ ԴՐԱՄ 10,075,212
ՀԱՍՈՅԹ 1889 ՏԱՐՒՈՅ 2,170,355

ՆՈՐԹՀԸՐՆ ԷՇՈՒՐԸՆՍ

ԴՐԱՄԱԳԼՈՒԽ Անգլ. Ոսկի 3,000,000. ՊԱՀԵՍՏԻ ԴՐԱՄ 3,781,300
ՀԱՍՈՅԹ 1889 ՏԱՐՒՈՅ 989,400

Ընկերութիւնքս Պոլսոյ մէջ ունեցած Միացեալ Գործակալութեան միջոցաւ հրդեհի դէմ ամէն կարգի վտանգաւոր ապահովագրութիւններ ի գործ կը դնեն չափաւոր գնով, և իրենց ցոյց տուած դրամական երաշխաւորութեանց համար մեծ գումարներ ապահովագրողաց կրնան վստահաբար վերինք ներկայացնել. նաև եթէ ապացոյց իրենց հաստատութեան, միայն հրդեհի ճիւղին համար մինչև ցարդ տուժած փոխանի 20,000,000 Անգլիական Ոսկին կ'անցնի:

ԾՈՎԱՅԻՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԱՐԻԹԱՅՄ

ԴՐԱՄԱԳԼՈՒԽ Անգլ. Ոսկի, 500,000 ՊԱՀԵՍՏԻ ԴՐԱՄ Անգլ. Ոսկի 102,345

Ընկերութիւնս կ'ապահովագրէ շոգենաւուց և առագաստանաւուց մէջի ապրանքներն և դրամածրարներն խիստ օգտակար պայմանաւ: Գնոց և այլոց վրայ տեղեկութիւն առնուլ ուզողք կը հրաւիրուին դիմել Ղալաթիա Մէհմէտ Ալի փաշա խան գետնայարկ թիւ 22 և 22 կը սենեակներն, առ **ԳԱՌՆԻԿ Յ. ՍԵՐՈԲԵԱՆ** Գործակալ Կ. Պոլսոյ վերոյիշեալ երեք Ընկերութեանց

ԻԼԱՆ

ՊԱԶԸ ՍԷՐԱՍՔԷՐԻ

Սէլանիք վէ Գոսօվա Ֆըրգալէրի իչուն ալընաճագ Լիվաթիչ վէ Պազարկեաչ նէվինտէն եուն չօրապ, չիֆթ գըրդ տօգուզ պին ալթը եւզ.

Պիր սէնէհէ էլվիշէ անպարընա լիւզումը օլան մըգտար ալընմագ իւզրէ միւզ վէ պուզլը իւչ եալտըզը սիմ քեագիտ գօրտօն, պէհէրի եւլ ալթը զուրուշ.

Միւպայեա օլունաճագ պալաթէ մաւրադգըմ իւքի գալէմ էչխանըն պիր հաֆթա խիթամընտա գապարը վերիլէճէկլէրինտէն իժայա թալիպ օլանլարըն մագամը Սէրասքէրի լեվազըմաթ տաիրէսինէ կէլմէլէրի իլան օլունուր:

29 իւլ 1890 843
Նօ. 19 2—3

VICHY

ՎԻՇԻ

Ֆրանսա (գաւառ Ալիէ)

ԿԱԼՈՒԱԾ ՖՐԱՆՍԱԿԱՆ ՊԵՏՈՒԹԵԱՆ

Վարչութիւն՝ Փարիզ, 8, Պուլվար Մօնմարթր

ՀԱՆՔԱՋՐՈՅ ԵՂԱՆԱԿ

PASTILLES DIGESTIVES.—Այս շաքարները Վիշիի մէջ պատրաստուած են ջերմուկներէն հանած աղով, ախորժակ կ'ազդեն և ապահով դարման մ'են ընդդէմ ... դէմ:

SELS de VICHY pour BAINS.—Այն անձանց համար որք չեն կրնար Վիշի երթալ:

Կեղծէն զգուշանալու համար, սրուակներու և շիշերու վրայ պահանջել ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ դրոշմը: Կը գտնուի Պոլսոյ բոլոր դեղագործաց քով: 596

ԴԵՂ ՋԵՐՄԻ ԵՒ ՏԵՆԴԻՑ

Տօքթօր Այէրի ջերմային հիւանդութեան, այս դեղը՝ որ անխառն բաղադրութիւն մի է զուտ բուսեղէնաց, է դառնահամ և ազդու կազդուրիչ ամէն տեսակ ֆիզիքական խանգարմանց, որ յառաջ կուգան ճախճախուտ վայրերու ջերմոտ կլիմայից վատ ու ապականեալ օդերէն, որուն օգտակարութիւնն և ապաքինիչ առոյգ յատկութիւնն երաշխաւորեալ է նորա անհամար արդեանցը ստոյգ գիտութեամբն: Այս ֆիզիքական խանգարումներն յառաջ կուգան օդին մէջ լողացող թունաւոր անլուծանելի նիւթոց միջոցաւ, որք թոքերէն անցնելով կը մտնեն արեան մէջ, կը խանգարեն լեարդն, և յառաջ կը բերեն տեսակ տեսակ ջերմեր և տենդեր, և արեան թունաւորումն. որոց ասանուններ տրուած է. ջերմն և սարսուռ, թոքային ջերմ, պարբերական ջերմ, ընդհատեալ ջերմ մաղձային տենդ և հրատապ տենդեր:

Թունաւորեալ օդերէ պատճառեալ հիւանդութիւնք կը պատահին այն տեղեր ուր մթնոլորտն ապականեալ և թունաւորեալ է ճահիճներէ կամ ճախճախուտ վայրերէ բուրեալ մահահոտ նիւթերով, կամ բաց աղբանոցներէ և ալքաններու ծակտիկներէն ելած թունաւոր կազերով, զորս մարդիկ կը ծծեն շնչառութեամբ:

Այէրի ջերմի ու տենդից դեղը կը ջնջէ այդ դունաւոր նիւթոց կամ կազերու ազդեցութիւնն և դուրս կը վանէ զայն մարմնոյն մէջէն, որոյ գործածութիւնն առուգապէս անվտանգ և անվնաս է և օգտուն առոյգ, միայն թէ տրուած հրահանգ ըստ համեմատ գործածուի: Կը ծախուի Մինասեան և ընկերաց Ամերիկեան վաճառատան մէջ ի Ղալաթիա Կ. Պոլսոյ: 30



ՇՈԳԵՆԱՒԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՀԱՅՆԱԿԱՆ ԵՒ ՄԱՐՈՒԲԵԱՆ

Ն. ԲԱՔԷ ԵՒ ԸՆԿ.

Մարսիլեայի և Բօմպէյի միջև կանոնաւորապէս բանող

Սամսոն, Տրապիզոն և Պաթում երթալիք յառաջիկայ շոգենաւն է Սէյտաօր որ հոկտ. 1ին Մարսիլեայէն և հոկտ. 23ին Կ. Պոլսէն պիտի մեկնի:

Բարիզ-Լիոն-Մարսիլիայ երկաթուղեաց ուղեւորութիւնն ի միասին առնլով,

Ա. կարգ 250 Փրանք
Բ. » 178 »

Ուղղակի և դարձ ուղեւորութեան

Նաւողչէքի, ուղեւորութեան և այլ տեղեկութեանց համար

Դիմել առ գործակատարն
ԹԻՄՈԹԷ ՐՐՊՈՒԼ
Թիւ 17-18 Քիւչիւք Միւմ
21 Մումհանէ փողոց, Թիւ 14

Արտօնատէր Ա. ՅԱՄԱՍԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ [illegible]

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՀՈՏԱՒԷՏ ՆԻՒԹԵՐ

ՔՐԱՈՒՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ, 117, ՆԻՒ ՊՈՆՏ ՍԴՐ. ԼՈՆՏՈՆ

ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ

ԼԸ ԺՈՒԱՅՕ ՏԸ ԼԱ ԳՈՒՐՈՆ, նոր սքանչելի հոտ	ԷՍ. ՊՈՒՔԷ
ՔՐԱՊ ԷՓԼ ՊԼՈՍՈՄՍ, վայրի խնձորենիայ ծաղիկք	ՃՕՔԻ ԳԼԸՊ
ՑԱՐԻՆԱ, Ռուսական գոգանոյշ հոտ	ԾՐՈՐՈՆԱՔՈ
ՀՈՒԱՅԹ ԼԻԼԱՔ, ճերմակ եղեանի	ՎԻՊԷԴ
ԳՈՒԻԼՈՒՐՍԻՍ, Նորելուկ	ԻԼԱՆԿ-ԻԼԱՆԿ
ԲԱՅՄՍ ՎԻՈԼԷԴ, հեշտաբոյր	ՄԻԼՖԼԷՕՐ
ԱՍՖՈՏԷԼ, ՕՐՔԻՏԻԱ, ՋԻՔՐ, ևն.	ՃԵՐՄԱԿ ՎԱՐԴ ևն.
ՀՈՒԱՅԹ ԷԼԻՈՏՐՈՓ	

TRADE MARK
T. DECHAINS

«Քրապ էփլ Պլոսսմ»ի առթիւ, Լոնտոնի Գուորդ լրագիրը կ'րսէ. «Եղանակին ամենէն նորելուկ հոտերէն գերազանց կը համարինք Քրապ Էփլ Պլոսսմը, Լոնտոնի Քրաուն ընկերութեան. կը ծախուի թագի ձեւով խիցեր ունեցող շիշերու մէջ. Միւս բոլոր տեսակները կեղծ են.

ԼԱՎԱՆՏԸՐ ՍՈԼԴՍ, Անգլիական աղեր լավանտայով—«Վայելուչ նորելուկ արդուզարդի սեղանի համար. Լավանտայի գերընտիր անուշահոտութիւն. Եթէ շիշը մէկ քանի վայրկեան բաց թողուս, սենեակին օդը կը մաքրուի և կը զովանայ» Այսպէս կ'րսէ Լոնտոնի «Տիկնանց Լրագիրը». Գերազանց պայման մըն է ընդդէմ գլխու ցաւերու, հարբուխի ևն. Կը ծախուի թագի ձեւով խիցեր ունեցող կանաչ շիշերու մէջ. Միւս բոլոր տեսակները կեղծ են.

ՕՐԱԼԻՆ փոշի. Տիկին Աստլինա Բադդի կը գրէ. «Գոհունակութեամբ կ'րսեմ թէ ձեր Օրալինը շատ գերազանց կը գտնեմ. մորթին վրայ կը թողու շատ հաճելի տպաւորութիւն մը. ԱՏԵԼԻՆԱ ԲԱԴԴԻ»

ՆՈՒՐԲ ՕՃԱՌՆԵՐ վայրի խնձորի ծաղիկներով Սավոն Ցարինա, Սավոն Լիլա Պլան, Սավոն Ռոզ Անկլէզ, վայոլէդ անկլեզ. Անգլիական Քոլոնիի Ջուր, Անգլիական լավանտայի ջուր, Փոշի Քրէմ և այլն.

Մեծաքանակ և փոքրաքանակ կը վաճառուի Թուրքիոյ եւ Պուլկարիոյ ներկայացուցչին քով. Մ. ԷՏՄՈՒՆՏ ԳԱՐՌԻԱՆԱ

Անգլիական Ընդհանուր մթերանոց, Վոյվոտա. պահականոցին քով, կայսրան թրամուէյեց, 95 և 67 106



ՍԱԼԻՀ ՍԸՏԳԸ

ՊՈԼԻՍ, ՍՈՒԼԹԱՆ ՊԱՅԱԶԻՏ, ՕԴՃԱԼԼԱՐ ՊԱՇԸ ԹԻՒ 61

Արանց, կանանց և տղայոց համար ամէն կարգի գեղեցիկ ու դիմացկուն կօշիկներ կը պատրաստուին Ֆրանսական առաջնակարգ ապրանքներէ. Այս խանութը դիմող յաճախորդք մեծապէս գոհ պիտի լինին մանաւանդ գներու աժանութենէն. 2 թիւէն 4 թիւ կօշիկներու կարով պատրաստուածները հինգ ղրշ աւելի պիտի ըլլան փայտէ գամով պատրաստուածներէն. 4 թիւէն 6 թիւի համար 5 ղրշի յաւելում մը պիտի ըլլայ այդ տարբերութեան վրայ.

Ղրշ.	տեսակ	Ղրշ.	տեսակ
85	ամէն տեսակ կարով պօթին կալոշ	33	կնոջ մուճակ
52	սկարբին կարով	40	պալատական կալոշ
140	կալոշով մոյկ կարով	70	կնոջ համար պօթին կալոշ
65	պօթին կարով	45	16 թիւէն մինչ 21 թիւ պօթին կալոշ տղայոց համար
80	մէստ կալոշ գամով	150	թէլաթին և ուղտի մորթէ մոյկ
140	ամէն տեսակ մոյկ		
160	փայլուն մորթէ մոյկ		

Տղայոց յատուկ կօշիկներու 21 թիւէն վեր եղածներուն համար հինգ ղրշի յաւելուած մը պիտի ըլլայ. Ցատկապէս յանձնարարուած կօշիկներու համար հարիւրին տասը յաւելում մը պիտի ըլլայ այս գնոյն վրայ. 143 24—24

ԱՌՈՂՋՈՒԹԻՒՆ—ՈՅԺ—ԿՈՐՈՎ

ՖՈՍՖՈՏԻՆ ՏՕՔԹՕՐ ԼԱԼՕՐԻ—Վերջին քսան և հինգ տարուան մէջ ապացուցուած է թէ այս դեղը ՖՈՍՖՈՐԱԿԱՆ ՄԻԱԿ ԴԱՐՄԱՆՆ է որ մինչև ցարդ գտնուած է, կատարելապէս բուժելու համար ուղեղի հիւանդութիւններն, անդամալուծութիւն, քնատութիւն, ջղաւանցանք, առնական կարողութեան վաղահաս կորուստ, եւ առնական ոյժերու կորուստէն յառաջ եկած ամէն գործարանական խանգարում:

Կը բուժէ դժուարամարսութիւնք, ջղային եւ սրտի հիւանդութիւնները, լեարդի եւ երիկամանց հիւանդութիւններն, արեան շրջանի բոլոր խանգարումները. ընդհանուր հիւծութիւնն եւ ապառումը. կը կազդուրէ կենսական ոյժերու ո և է կորուստ որ յառաջ եկած է ո եւ է պատճառէ:

Ջղային տկարութեան եւ սոսոր հետեւանաց մէջ այս դեղին ազդուութիւնն անմիջական եւ մնայուն է. Մելամաղձութեան զգացումներն եւ սխտանիշք կ'անհետանան ճշմարտապէս հրաշալի արագութեամբ մը.

ՏՕՔԹՕՐ ԼԱԼՕՐԻ ՖՈՍՖՈՏԻՆԸ ջղային հիւթ եւ ուղեղային գոյացութիւն կ'առեղծէ, արեան մէջ մուծանելով կենսական ելեկտրական տարրը, ֆոսֆորն, որ ուղեղին կեդրոնական ճշմարիտ գոյացութիւնն է. Առնական կարողք կը կենդանացունէ մարդկային ամբողջ գրութեան մէջ, մարմնոյն եւ մտքին տալով հաւժկու եւ առոյգ առողջութիւն մը. այնպէս որ կարելի է բոլոր պարտականութիւններն կատարել վստահութեամբ եւ գոհունակութեամբ: Ախորժահամ է, կը զօրէ եւ կը ճոխացնէ արիւնն եւ նոր առուգութիւն մ կուտայ ուղեղին, ջղային դրութեան եւ մկանանց: Իւր վերանորոգիչ ազդեցութիւնը կը տեմնուի գործածուած առաջին օրէն իսկ, ջղային դրութեան եւ մտաւորական կարողութեանց նշմարուոր յաւելմամբ եւ կորովութեան եւ բարօրութեան զգացմամբ մը որ վարժութիւնն հիւանդը չուտուց ի վեր կ... էր: Մարսողութիւնը վերանորոգուած է: Ախորժակը հրաշալի կերպով կ'աւելնայ: Աղեաց պաշտօնը կանոնաւորապէս կը կատարուի: Քունը կը լինի հանդարտ եւ կազդուրիչ: Դէմքը կ'ակսի լեննալ, շրթունքը կը գունաւորին, աչերը շողուն կը լինին, մորթը պայծառ եւ առողջ գոյն մը կ'առնու, մազերը ոյժ կ'առնեն:

Զգուշացէք սոսոր նմանութիւններէն: Տօքթօր Լալորի ճշմարիտ Ֆոսֆոտինը պարունակեալ է մին շիշերուն մէջ որք բրիտանական կառավարութեան դրոշմը կը կրեն առ բառերով Dr. Lalors' Phosphodyne. London, England սրոն փորագրուած: Այս դեղին ունեցած յաջողութիւնն յառաջ բերած առանձին վստահելի եւ վնասակար կեղծեր:

Մեծաքանակ եւ փոքրաքանակ կը վաճառուի Թուրքիոյ եւ Պուլկարիոյ ներկայացուցչին քով,

601 Մ. ԷՏՄՈՒՆՏ ԳԱՐՌԻԱՆԱ

Անգլիական Ընդհանուր Մթերանոց. Վոյվոտա. պահականոցին քով, կայսրան թրամուէյեց, 95 եւ 97.



ՄՈՍ

ՇՈԳԵՆԱՒԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Լիվըրփուլի և Միջերկրականի միջև բանող շոգենաւք

Անուանք	Թոնոյ	Անուանք	Թոնոյ
Քանարեա	4200	Սֆինքս	3000
Ֆէրոս	4000	Օսայրիս	3000
Օսմանլի	4000	Նէբթիս	3000
Սէսոստրիս	3250	Բէրա	3000
Թիպս	3250	Լոդիւս	800
Մակեդոնիա	3250	Օլինթոս	800
Մարիոթիս	3250	Սեւիլ	700

Դիմել առ Ժ. Վ. ՎԻԹՕԼ և ԸՆԿ
Ուիթօլ խան
ՃԷՅՄՍ ՄՈՍ և ԸՆԿ.
9 31, Ճէյմս Սդրիդ Լիվըրփուլ

COMP RUSSE

DE NAVIGATION A VAPEUR ET DE COMMERCE

ՌՈՒՍԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՆԱՒԱՐԿՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՈՒՐԻ

Շաբթուան երթեւեկութիւնք

Օր Հոկտ.	Ժ. Ը.Ե.	Երթալիք տեղը շոգենաւ
Բշ. 1 13	Եր.	Օտեսա
Գշ. 2 14	5 Եր.	Աղեքսանդրիա
Դշ. 3 15	10 Առ.	Անատոլու
Դշ. 3 15	10 Առ.	Սեվաստոփոլ
Եշ. 4 16	2 Եր.	Օտեսա

Մանրամասն տեղեկութեանց համար դիմել առ Գործակալութիւնն Ռուսական ընկերութեան ի Քիրէճ Գափու: 26

ԼԱ ՌՈՒԱՆԷԶ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԸՆԴԴԷՄ ՀՐԴԵՀԻ

ՀԻՄՆԵԱԼ Ի 1837

Կեդրոնատեղի՝ 18, Սէն-Մառք փողոց, Բարիզ

Դրամագլուխ,	4,000,000	Գանձելի հասոյթք և պահեստի դրամ	3,900,000
Տարեկան հասոյթ	1,150,000	Վճարեալ վնասներն իբր	30,000,000

Ընկերութիւնը կ'ապահովագրէ ամէն տեսակ կալուածներ, վաճառք և կարասիք, նպաստաւոր պայմաններով և չափաւոր գներով:

Աւելի ընդարձակ տեղեկութեանց համար դիմել ի գրասենեակ ընդհանուր գործակալութեան, Ղալաթիա, Մահմուտիյէ փողոց, թիւ 2, Ճէրէմեան խան, Գամենտոյի Պանգային դիմաց:

25

Ընդհանուր գործակալք Թուրքիոյ ՍԻՄՈՆ ՔԱՑՈՒԷՐԼԵԱՆ և ԸՆԿ.



ՇԻՐՔԷԹԻ ԽԱՅՐԻՅԷ

ՇՈԳԵՆԱՒՈՒՑ ԵՐԹԵՒԵԿՈՒԹԵԱՆ ՑՈՒՑԱԿԸ

1890 Սեպտեմբեր 12 Չորեքշաբթի օրէն սկսեալ մինչև ցնոր տնօրինութիւն

(Բացի կիրակի օրերէն) Եւրոպական ծայրէն կամուրջէն ելնող շոգենաւուց երթեւեկութիւնը

Ժ. Ն.		Թ.
12 45	Ենիմ. Մեգպ. Պէօյ. Թարպ. Ենիք. Պոյաճ. Ր. Հիսար (Արնավուտ գիւղի շոգ. հետ պիտի հաղորդակցի)	33
1 —	Ր. Ա. Գավագ Մեգպ. Պէյք. Թարապ. Պէյգօզ մինչև Գանտիլլի [Գանտ. շոգ. հետ պիտի հաղորդկցի. ուր. օրերը Վանիք. Չէնկ. Պէյլ. Գզկ. Պէշիք]	37
1 30	Ենիմ. Մեգարպ. Պէօյիւք. Թարապ. Ենիքէօյ Սթէն. Միրկ. (Արնավուտ գիւղի շոգ. ին հետ պիտի հաղորդակցի)	38
2 15	Ենիմ. Մեգարպ. Պէօյիւք. Թարապ. Ենիք. Պէշիք. (Ենիգիւղի շոգ. ին հետ պիտի հաղորդակցի ուրբաթները մինչև Պէպէք պիտի հանդիպի)	17
2 50	Ենիք. Սթէն. Միրկէն Պոյաճ. Ր. Հիսար Պէպէք Արնվ. Գուրչ. Օրթ. Պէշիքթ. (բացի ուրբաթէ)	21
2 45	Ր. Ա. Գավագ Ենիմ. Մեգարպ. Պէօյիւք. Թարապ. Պէյգօզ Բ. Պաշճէ Չուպք. Գանլըճա Ա. Հիսար Գանտիլ. Պէշիքթ. (ուրբաթ օրեր ժամ 2 45ին Մեգար. էն պիտի մեկնի) Վանիք. Չէնկ. Պէյլէր. Գուզկ.	20
3 15	Ենիմ. Մեգպ. Պէօյ. Թարպ. Ենիք. Սթէն. Միրկ. Պոյաճ. Ր. Հիսար. Պէպէք [Պէպէքի շոգ. հետ պիտի հաղորդակցի) ուրբաթները Արնվ, Գուր. Օրթ. Պէշիք.	28
4 30	Ենիմ. Մեգպ. Պէօյիւք. Թարպ. Ենիք. Սթէն. Միրկ. Պոյաճ. Ր. Հիսար Պէպէք Արնվ. Գուր. Օրթ. Պէշիք	33
5 45	Ենիմ. Մեգար. Պէօյիւք. Թարպ. Ենիք. Սթէնիա Միրկ. Պոյաճ. Ր. Հիսար. Պէպէք Արնավ. Գուրչ. Օրթաք. Պէշիք.	22
7 —	Ենիմ. Մեգարպ. Պէօյիւք. Թարապ. Պէյգօզ Բաշչ. Ենիք. Չուպ. Գանլըճ. Միրկ. Ր. Ա. Հիսար Գանտ. Արնվ. Չէնկ. Պէյլէր. Օրթաք. Գուզ. Պէշիք. Իւսկ.	6
8 5	Ա. Կր. Գավագ Ենիմ. Մեգարպ. Պէօյ. Թար. Ենիք. Սթէնիա Միրկ. Ր. Հիսար Պէպէք Արնվ. Գուրչ. Օրթ. Պէշիք.	17
10 —	Մեգարպ. Պէօյ. Թարապ. Ենիք. Միրկ. Ր. Հիսար Արնավ. Օրթաք. Պէշ.	34

Արնաւուտքիւղէն կամուրջ ելնող շոգենաւ

12 35	Ենիք. Սթէն. Միրկէօն Պոյաճ. Ր. Հիսար Պէպէք Արնավ. Գուրուչ. Օրթ. Պէշիք.	23
12 30	Ր. Հիսար Պէպէք Արնվ. Գուր. Օրթ. Պէշիք.	2
1 —	Պէպէք Արնվ. Գուր. Օրթ. Պէշիք.	22
1 35	Ր. Հիսար Պէպէք Արնավ. Գուր. Օրթաք. Պէշիքթաշ Գազ.	6
2 15	Միրկ. Պոյաճ. Ր. Հիսար Պէպէք Արնավ. Գուրչ. Օրթաքէօյ Պէշիքթաշ	23
2 45	Պէպէք Արնավ. Գուրուչ. Օրթաք. Պէշիք.	2
3 15	Պէպէք Արնվ. Գուր. Օրթ. Պէշ.	21
3 45	Պէպէք Արնվ. Գուր. Օրթ. Պէշիք. Գազ.	23
4 15	Պէպէք Արնվ. Գուր. Օրթաք. Պէշ. (Բացի ուրբաթէ)	2
10 —	Միրկէօն Չէնկ. ուղղ. կմրջ. բացի ուրբ. է	38
11 10	Պէպէքէն ուղղակի կամուրջ ուրբաթ օրերը Ր. Ա. Հիսարէն	6

Անատոլու ծայրէն կամուրջ ելնող շոգենաւ

12 30	Պէյգօզ Բաշչա. Չուպ. Գանլ. Ա. Հիսար Գանտ. (Գանտ. պիտի հղրդկցի.)	23
12 30	Պէպէք Գանտ. Վանիք. Չէնկ. Պէյլ. Գուզկ. Պէշիքթաշ	28
1 25	Գանտ. Վանիք. Չէնկէլ. Պէյլէր. Գուզ. Իւսկ.	34
1 35	Պէյգօզ Բաշչա. Չուպուք. Գանլճ. Ա. Հիսար Գանտլ. (Գանտլ. պիտի հղրդ. (Ուրբաթ օրերը Վան. Չէնկ. Պէյլ. Գուզկ. Պէշիք.)	37
2 45	Պէյգօզէն Ենիգիւղ անտի Եւրոպական եզերք մինչև Պէշիք. (բացի ուրբաթէ)	21
2 25	Գանտ. Վանիք. Չէնկէլ. Պէյլէր. Գուզ. Պէշիք. (Բացի ուրբաթէ)	22
3 20	Գանտ. Վանիք. Չէնկէլք. Պէյլէրպ. Գուզկ. Պէշիքթաշ (Բացի ուրբաթէ)	34
3 30	Պէյգ. Բաշչա. Չուպուք. Գանլըճ. Ա. Հիսար Գանտիլ. Պէշիք. (ուրբթ. 2 45ին Վանիք. Չէնկ. Պէյլ. Գուզկ.	20
4 15	Գանտլ. Վանիք. Չէնկէլ. Պէյլէր. Գուզ. Իւսկիւտար (բացի ուրբաթէ)	33
4 0	Պէյգօզ Բաշչա. Չուպ. Գանլըճա Ա. Հիսար Գանտլ. Վանիք. Չէնկ. Պէյլր. Գուզկ. Պէշիկ. (ուրբաթ օրեր ժամ 4.30ին Մեգարպ. էն մեկնելով Պէօյիք. և Թարապիա պիտի հանդիպի.	37
7 —	Միրկ. Ր. Ա. Հիսար Գանտ. Արնվ. Չէնկ. Պէյլ. Օրթ. Գուզկ. Պէշիք. Իւսկ.	21
9 5	Պէօյիւք. Թարապիա Պէյգ. Բաշչ. Չուպ. Գանլ. Ա. Հիսար Գանտ. Վանիք. Չէնկ. Պէյլ. Գուզ. Իւսկիւտար	20
9 30	Պէյգօզէն ուղ. կամրջ. (բացի ուրբաթէ)	28
10 20	Գանտլ. ուղ. կամրջ.	23
11 —	Գուզկ. էն ուղղակի կամուրջ (Բացի Ուրբաթէ)	22
10 50	Չէնկ. ուղղ. կամրջ. ուրբաթները 10 30ին	2

(Բացի կիրակի օրերէն) կամուրջէն Եւրոպական ծայրէ երթեւեկող շոգենաւուց ժամերը

1 40	Պէշիքթ. Օրթաք. Գուրչ. Արնավտ. Ր. Հիսար Պոյաճք. Ենիք. Թարպ. Պէօյ. Մեգար. Ենիմ.	28
2 45	Պէշիք. Օրթաք. Գուր. Արնավուտք. Պէպէք Ր. Հիսար Միրկ. Ենիք. Թար. Պէօյ. Մեգարպ. Ենիմ.	33
3 —	Գազպաթ. Իւսկ. Պէշիք. Գուզկ. Օրթ. Պէյլէր. Չէնկէլ. Արնավ. Գանտիլ. Ա. և Ր. Հիսար Գանլըճ. Միրկ. Ենիք. Բաշչ. Պէյգ. Թարապ. Պէօյ. Մեգ. Ենիմահալլէ	6
4 —	Պէշիք. Օրթ. Գրչ. Արնվ. Պէպէք Ր. Հիսար Պոյաճ. Սթէնիա Ենիք. Թարպ. Պէօյք. Մեգար. Ենիմ.	22
5 —	Իւսկ. Պէշիք. Գուզկ. Օրթաք. Պէյլ. Չէնկ. Արնվ. Գանտ. Ա. և Ր. Հիսար Գանլ. Չուպք. Միրկ.	21
6 —	Գազպաթ. Պէշիք. Օրթաք. Գուրուչ. Արնավ. Պէպէք. Ր. Հիսար Միրկ. Ենիք. Պէյգօզ Թարապ. Պէօյիւքտ. Մեգր. Ենիմ. և Գավաքներ	17
7 —	Պէշիք. Իւսկ. Գուզկ. Պէյլ. Չէնկ. Արնվ. Գանտիլ. Ր. Հիսար Պոյաճ. Գանլ. Ենիք. Պէյգօզ Թարպ. Պէօյիւք.	20
8 30	Պէշիք. Օրթ. Արնավ. Պէպ. Ր. Հիսար Միրկ. Ենիք. Թարպ. Մեգար. Պէօյ.	34
9 20	Պէշիք. Օրթաք Գուրչ Արնավ. Պէպէք Ր. Հիսար Միրկ. (ուրբաթները Ենիք. Թարապ. Պէօյիւք. Մեգարպ.	38
10 10	Ենիք. Թարպ. Պէօյք. Մեգպ. Ենիմ. Ուրբաթները Ր. Հիսար Միրկէօն	37
10 5	Պէշիք. Օրթ. Գուր. Արնվ. Պէպէք Ր. Հիսար Պոյաճ. Միրկ. Ենիք. Թարպ. Պէօյ. Մեգպ. Ենիմ. (բացի ուրբաթէ)	21
10 45	Ր. Հիսար Պոյաճ. Միրկ. Սթէն. Ենիք, Թարպ. Պէօյիւքտէրէ. Մեգար. Ենիմ. (ուրբաթները Օրթագիւղ)	17
11 20	Ենիք. Թարպ. Պէօյ. Մեգպ. Ենիմ.	38
11 35	Պէպէք Ր. Հիսար Պոյաճ. Միրկ. Սթէն. Ենիք. (ուրբաթները Պէշիքթաշ)	22
10 30	Պէշիք. Օրթ. Գուրուչ. Արնավ. Պէպէք (Ուրբաթ օրերը 10 15ին և Ր. Հիսար Վանիքոյ ելնող շոգ. հետ պիտի հաղ.)	6
11 20	Գազ. Պէշիք. Օրթ. Գուր. Արնավ. Պէպէք Ր. Հիսար. Պոյաճք.	20
11 40	Պէշիք. Օրթ. Գուրուչ. Արնվ. Պէպէք [Բացի ուրբաթէ]	2
12 —	Պէշիք. Օրթ. Գուր. Արնվտ.	6

Կամուրջէն Արնաւուտքիւղ երթեւեկող շոգենաւուց ժամերը

1 5	Ուղղակի Միրկէօն	23
2 5	Ուղղակի Պէպէք	
3 15	Ուղղակի Պէպէք	23
3 45	Ուղղակի Պէպէք (բացի ուրբաթէ)	2

Կամուրջէն Անատոլու ծայրէ երթեւեկող շոգենաւուց ժամերը

1 45	Ուղղակի Գանտիլլի (բացի ուրբաթէ)	22
2 40	Ուղղակի Չէնկ. Գանտլ. [Բացի ուրբաթէ]	34
3 —	Իւսկ. Գուզկ. Պէյլ. Չէնկ. Վանիք. Գանտ. Ա. Հիսար Գանլ. Չուպուք. Բաշչ. Պէյգ. ուրբաթները 2 30ին ելլելով Թարպ. Պէօյիւքտէրէ հանդիպելով Մեգարպ. պիտի երթայ	37
3 40	Ուղղակի Գանտիլլի (բացի ուրբաթէ)	38
8 15	Գուզկ. Պէյլ. Չէնկ. Գանտ. Ա. Հիսար Գանլ. Չուպ. Բաշչ. Պէյգօզ (Բացի ուր.)	23
9 25	Պէշիքթաշ, Գուզկունճ. Պէյլէր. Չէնկէլ. Վանիք. Գանտլ. (Գավաքներ գացող շոգենաւին հետ պիտի հաղորդակցի)	23
10 5	Գանտիլլի Ա. Հիսար Գանլ. Չուպ. Բաշչա. Պէյգ. Թարապ. Մեգարպ. Գավաքներ [ուրբաթները Պէյլէրպ]	33
10 10	Գազ. Գուզկ. Պէյլ. Չէնկ. ուրբաթները 10ին միայն Գուզ. Չէնկ. պիտի հանդիպի	2
10 40	Իւսկ. Գուզ. (Բացի ուրբաթէ)	22
10 45	Պէշիքթաշ Գուզգնճ. Պէյլէր. Չէնկէլ. Վան. Գանտ. Պէպէք (Ուրբաթ օրերը Իւսկ.	28
11 15	Գանտիլ. Ա. Հիսար Գանլըճ. Չուպ. Բաշչ. Պէյգօզ (ուրբթ. Գուզկ.)	23
11 30	Գազպ. Գուզ. Պէյլ. Չէնկ. Վանիք.	34

Ամէն ուրբաթ առաւօտ երեքին քառորդ մնացած կամուրջէն շոգենաւ մը ելլելով ուղղակի Պէպէք.

Ամէն ուրբաթ օր կամուրջէն ժամ չորսին շոգենաւ մը ելլելով Իւսկ. Գուզկ. Պէյլ. Չէնկ. Վանիք. Գանտ. Ա. Հիսար Գանլ. Չուպ. Բաշչ. Պէյգօզ Թրպ. Պէօյք. Մեգ. հանդիպելով Ենիմ. պիտի երթայ:

Ամէն ուրբաթ երեկոյ ատամուկեային Ենիմ. շոգենաւ մը ելլելով Մեգպ. Պէօյք. Թարպ. Պէյգօզ Բաշչ. Չուպ. Գանլ. Ա. Հիսար Գանտ. Վանիք. Չէնկ. Պէյլ. Գուզկ. Իւսկ. հանդիպելով կամուրջ պիտի երթայ:

Դարձեալ ամէն ուրբաթ երեկոյ Մեգպ. էն տասնմէկին շոգենաւ մը ելլելով Պէօյք. Թարպ. Պէյգօզ Ենիք. Միրկ. Ր. Հիսար Արնվ. Օրթաք. Պէշիք. հանդիպելով կամուրջ պիտի երթայ:

Առաւօտուն Ենիմահալլէէն ժամ 12ին և 1.30ին և կամուրջէն 1.20ին և երեկոները կամուրջէն 8 15ին և 8.30ին, և ժամ 10ին Մեգարպուրնուէն ելնող շոգենաւներուն մէջ բեռ չպիտի ընդունուին: ժամ 10.40ին կամուրջէն Իւսկիւտար գացող շոգենաւը բեռ չպիտի ընդունի:

Փոթորկալից օդերուն Մեգարպուրնու և Ր. Գավագ շոգենաւ չպիտի հանդիպի:

ԻՒՍԿԻՒՏԱՐ ԵՐԹԵՒԵԿՈՂ ՇՈԳԵՆԱՒՆԵՐ

Իւսկիւտարէն	Կամուրջ	Կամուրջէն	Իւսկիւտար
— —		— —	6 25
— —	7 5 Պէշիկ	— —	7 5
— —	8 — Պէշիկ	12 20	8 15 Պէշիկ
12 30	8 20 Վ.ոսփ	12 50	9 5
1 — Պէշիկ	9 —	1 20 Վ.ոսփ	9 50
1 30	9 30	1 35 Պէշիկ	10 10 Պէշիկ
2 — Վ.ոսփ	10 — Ֆէրպ.	2 10	10 30 Ֆէրպ.
2 30 Պէշիկ	10 20 Պէշիկ	3 — Վ.ոսփ	10 40 Գզ.
3 —	10 50	3 —	11 —
3 15 Ֆէրպ.	11 — Գուզկ.	3 20 Պէշիկ	11 20 Ֆէրպ.
3 40	11 10 Ֆէրպ.	4 45 Պէշիկ	11 20
4 15 Պէշիկ	11 20	3 45 Ֆէրպօթ	11 50
4 45 Վ.ոսփ	11 40	5 — Վ.ոսփ.	11 55 Գզ.*
5 — Ֆէրպ.	12 5	5 35 Պէշիկ	12 5
5 30	— —	5 30 Ֆէրպօթ	— —
6 15	— —	— —	— —

ԿԻՐԱԿԻ ԵՒ ՈՒՐԲԱԹ ՕՐԵՐ

Իւսկիւտարէն	Կամուրջ	Կամուրջէն	Իւսկիւտար
— —	— —	— —	— —
— —	7 5 Պէշիկ	— —	— —
12 15	8 — Պէշիկ	12 35	7 5
1 — Պէշիկ**	8 20 Վ.ոսփ.	1 20 Պէշիկ	8 15 Պէշիկ
1 45	9 — Պէշիկ	2 —	9 5
2 30	9 30	2 40	9 45
3 20	10 — Ֆէրպ.	3 10 Պէշիկ	10 10 Պէշիկ
3 15 Ֆէրպօթ	10 10 Պէշիկ	3 45 Ֆէրպօթ	10 30 Ֆէրպ.
4 — Պէշիկ	10 40	4 30	10 40
4 45 Վ.ոսփ	11 10 Ֆէրպ.	5 — Վ.ոսփ.	11 20 Ֆէրպ.
5 15 Պէշիկ	11 10	5 25 Պէշիկ	11 20
5 — Ֆէրպօթ	11 40	5 30 Ֆէրպօթ	11 40
6 —	12 5	6 15	12 5

* Այս երթեւեկութիւն Հրեից տօներուն, և շաբաթ օրերը Գուզկ. չպիտի հանդիպի:
** Բացի կիրակի օրերէ:

ՀԱՐԷՄ ԻՍԿԷԼԷՍԻ ԵՐԹԵՒԵԿՈՂ ՇՈԳԵՆԱՒՆԵՐ

ԲԱՑ Ի ՈՒՐԲԱԹ ՕՐԵՐԷՆ

2 30	Հարէմէն Սալաճագ	(բացի կիրակիէ)
4 15	» »	(բացի ուրբաթէ)
10 40	» »	(բացի ուր. և կիր. օրերէ)
11 25	» »	(ուր. և կիր. ժ. 10 45ին
2 10	կամուրջէն Հարէմ Սալաճագ	(բացի կիր.)
3 45	կամուրջէն Հարէմ Սալաճագ	(բացի ուր.)
10 10	կամուրջէն Հարէմ անտի Սալաճագ	(բաց ի ուրբաթ և կիրակի օրերէն)
11 10	կամուրջէն Հարէմ անտի Սալաճագ	(կիրակի և ուրբաթ օրերը ժ. 10 30ին).

ԻՒՍԿԻՒՏԱՐ ՍԻՐՔԷՃԻ ԻՍԿԷԼԷՍԻ ԵՒ ԳԱՊԱԹԱՇԻ ՄԻՋԵՒ ԿԱՌԱԲԱՐՁ ՇՈԳԵՆԱՒՈՒՑ ԵՐԹԵՒԵԿԻ ԺԱՄԵՐԸ

3 15	Իւսկիւտարէն Գապաթաշ Սիրքէճի
5 —	Իւսկիւտարէն Սիրքէճի
10 —	Իւսկիւտարէն Սիրքէճի
11 10	» Գապաթաշ (Ենի գիւղի շոգենաւին հետ կը հաղորդակցի)
3 45	Սիրքէճիէն Իւսկիւտար
5 30	Սիրքէճիէն Գապաթաշ Իւսկիւտար
10 30	Սիրքէճիէն Իւսկիւտար
11 20	Գապաթաշէն Իւսկիւտար

Ծան.—Օդը մրգապատ եղած ատեն, շոգենաւք իրենց գտնուած տեղը պիտի մնան: 12